



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՆՈՎՈԶԵՐԿԱՍԿԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՎԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄ

ՆԱԽԱԴՐՈՑԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ —

ՆԵԽՈԴՊՐՈՑՈՎՈՎԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՅԵՐԿՐԱՅԻՆ ԼՈՒՐԱՎՆԵՐ ԳՐԲԻ ՀԱՆՁՆԱՇՈՒԼՈՎԻ ԿՈՂՄԻՑ
ՔՈՒԵԼԱՑՈՎԱԾ Ե ԿՈԼ. ՅԵԿ. ԽՈՐՀՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱԴՐՈՑՈՎՈՎԱԿԱՆ ԱՏԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ազատ փոխադրեց յակ կազմեց
Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

372.21

ԿԴ - 66

ՀՕ.Ֆ.Օ.ԿԶՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱԾ»
ՌՈՍՏՈՎԾՈՅՆ

1932 թ.

0120-19

ՆՈՎՈԶԵՐԿԱՍԿԻ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ ՀՅՈՒՍԽԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՑ

379-21

Փ-66

ԱԿ

ՆԵԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՅԵՐԿՐԱՅԻՆ ԼՈՒԽԲԱԺԻՆ ԳՐՔԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈԴՄՐՑ
ԹՈՒՑԱՏՐՎԱԾ Ե ԿՈԼ. ՅԵՎ. ԽՈՐՉՏՆԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ազատ փոխադրեց յև կազմեց
Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

Սացիալիստական շինարարության նվաճումները և նա խաղպրոցական գաստիարակության խնդիրը	3
Նախադպրոցական գաստիարակության կազմակերպչա- կան աշխատանքները	5
Նախադպրոցականի տարիքային առանձնահատկու- թյունները	8
Նախադպրոցական հաստատության սեմինար ու առող- ջապահությունը	12
Նախադպրոցականի կոռուպտական դաստիարակու- թյան հիմք. խնդիրները	18
Աղջիկների և տղաների հավասար դաստիարակու- թյուն նախադպրոցական հաստատությաններում	21
Պալխտեկնիկական դաստիարակություն	22
Խաղեր և ազատ զբաղմունքներ	28
Խոռք, զրույց, պատմվածք, զրքույկ	34
Գեղարվեստական դաստիարակություն	36
Գրաճանաչություն և թվարանություն մանկապարտեղի ավագ. խմբում	38
Հասարակական-մանկավարժական աշխատանք	39
Աշխատանքի պլանավորում և հաշվառք	45
Մեթոդական մասսայական աշխատանքների կազմա- կերպումն	49
Պայքարել թեքումների դիմ. նախադպրոցական. ընդհ. ուսուցման փրոնտում	51
Մանկական հաստատության զրամական կահավորան- քի և պարենի հաշվետարություն	53
Հագելված-մանկական հաստատության կահավորանքը	55



3505

2630

Отв. редактор
А. Г. Двакъян

Упо лярэйлита № 1677. Ростов н-Д. Газ.-жн. тип. СККПО Ст. форм. А5-148x210. Зак. № 3727

ԵԱԽԱԴՐՈՅԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՈՒՄՆԵՐՆ
ՈՒ ԵԱԽԱԴՐՈՅԱԿԱՆ ԴԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Հյուսիսային կովկասը ինչպես արդյունաբերության, նույնական գյուղատնտեսության բնագավառներում աննախնթաց հաջողություններ ունի. զբանք ձևոք են բերված զասակարգային սուր պայքարի սիցոցով, սուր պայքար՝ ուղղված կապիտալիստական տարրերի՝ զեօթափիտալիստական յերգեհնին ձայնակցող «Ճախ» և ներկա ետապում զլիավոր վտանգ ներկայացնող աջ թեքումների, տրոցկիզմի և նրանց բազմերանդությունների դեմ:

«Առաջին հաղամյակի սոցիալիստական շինարարության կարգվագույն հանրագումարը մեր յերկրամասում հանդիսանում է կապիտալիզմի արժատների վերջնական վոչնչացումը դյուդում, վորը կանխորոշում է կապիտալիստական տարրերի լիակատար վերացումը և դասակարգերի վոչնչացումը» (Յերկրային Դ. բգ կուսկոնֆերանսի վորոշումից):

Այս խոշոր նվաճումները, ինչ ունեցել ենք արդեն և այս հսկա սպիրաները, վորոնք դրված են յերկրորդ հնգամյակում, պահանջում ուժերի լարում, մասսաների ենատուզիապմ, վորոնք կոմունիստական կուսակցության ղեկավարության տակ վերածվում են ստեղծառժործական ուժի և եկնդանի գործ են դառնում:

Կանանց՝ բանվորուհիների և կոլտնտեսութիների գերը սոց. շինարարության բոլոր ասպարիզում մեծանում է: Սոցիալիստական արդյունաբերության և կոլեկտիվացման գյուղատնտեսության մեջ կանանց մասնակցության տեսակաբար կշիռն ավելի ու ավելի վճռական նշանակություն և ուկում ասանալ: Արդյունաբերական բանվորների 1/2-ը կանացք են, մի տարգա ընթացքում մեր յերկրամասի արդյունաբերության մեջ աշխատող կանանց թիվը 1 ½ անգամ ավելացել է: Բարձրացել է իին մասսաների ականակությունը ինչպես արդյունաբերության մեջ, նույնական և զոլտնտեսություններում:

Սոց. արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ կանանց հոծ ձասաների մասնակյությունը, քանվորուհիներից և կողանտեսուհիներից նոր վորակյալ կագրեր պատրաստելը, կանանց նախաձեռնության և ակտիվության ոգտագործումն արտադրական և հասարակական աշխատանքների մեջ՝ հաճառորեն պահանջում են նախադպրոցական հաստատությունների ցանցի լայնացում, ընդհանուր նախադպրոցական դաստիարակության իրացում:

Ընդհանուր նախադպրոցական դաստիարակության ծավալման մյուս հիմնական նպատակն եւ լուծել նախադպրոցական մանուկներին կոմունիստական խղիողողիայով դաստիարակելու և նըանցից անդասակարգ հասարակարգ ստեղծողներ պատրաստելու խնդիրը:

1931 թվի գեկտեմբերին կայացած նախադպրոցական յերկրային համագումարը գտավ, վոր մեր յերկրամասում նախադպրոցական աշխատանքները ծավալելու բոլոր նախադպրոցական կան: Դեռ 1932 թվի սկզբին նախադպրոցական դաստիարակության ցանցում ընդգրկված յերեխանների թիվը 320 հազարի յեր հասնում: Մեր արդյունաբերական կենտրոններում, խորհանտեսությունների և մեքենատրակտորային կայանների շրջաններում, ազգային մարդերում և ուղարկում նախադպրոցական հաստատությունների ցանցը զգալի չափերի յեր հասել Բայց այդ աշխատանքն ել ավելի ծավալելու համար անհրաժեշտ և բանվորական ու կոլտնտեսական մասսաների մեջ լայն ազիտացիոն-մանկավարժական աշխատանք կատարել: Անհրաժեշտ և տնտեսավարների և կոլտնտեսությունների ղեկավար մարմինների ուղագրությունը հրավիրել՝ այս վոչ պակաս կարելոր խնդրի վրա նրանց նյութական ոժանդակության ստացումն ապահովել:

Նախադպրոցական դաստիարակության յերկրային 2-րդ համադրումը հաշվի առնելով ծեռք բերած հաջողությունները, սիալներն ու թերությունները, անհրաժեշտ համարեց Հ. Կովկասի Կուսյերկրկոմի ղեկավարությամբ, 1932 թվի ընթացքում մեր յերկրամասում անցկացնել հետեւյալ միջոցառումները:—

Արդյունաբերության առաջատար ճյուղերի շրջաններում, նորակառույցներում, մեքենա-տրակտորական կայաններում և խորհանություններում բանվորների և բանվորուհիների յերեխաններին 100 տոկոսով ընդգրկել նախադպրոցական դաստիարակության ցանցում:

Կոլտնտեսային սեկտորում նախադպրոցական հաստատությունների ցանցը առավելացույն չափով լայնացնել: Յերկրամասի նախադպրոցական տարրիքի մանուկներին 62,4 տոկոսով (730000 հոգի) ընդգրկել նախադպրոցական հաստատություններում:

Երդյունաբերական առաջատար ճյուղերի շրջաններում՝ բանվորուհիների յերեխաններին 100 տոկոսով ընդգրկել մանկական ոջախներում և մանկապարաններում:

ՄՏԿ ռայոններում կողանտեսականների յերեխանների 45 տոկոսն ընդգրկել ստացիոնար (տեղողական) հաստատություններում, աշխատելով գրանք մանկապարտեղների վերածել:

Համատարած կողեկտիվացման մյուս ռայոններում առլանովի յերեխանների 20 տոկոսի ընդգրկումը ստացիոնար հաստատություններում, իսկ 60 տոկոսը՝ մանկահապարակներում: Վերջինները 1933 թվի հունվարից պետք է գառնան վերջնականապես նախադպրոցական ցանցի մեջ մտած հաստատություններ:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Այս վորոշումները կյանքում լրիվ իրագործելու համար, անհրաժեշտ և տեղերում լայն բացարարական ու կազմակերպչական աշխատանք տանել և առաջին հերթին ապահովել մանուկների ընդգրկումը գյուղատնտեսական բունքն աշխատանքների ժամանակաշրջանում (դարնանացան, քաղհան, բերքահավաք): Զգետք և մոռանալ վոր ըստ Ռայլիուսմիտիյան և Ռայլյուսբաժնի պլանների, մանկահապարակների մի մասը պիտի մանկապարտեղների վերածվեն:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախադպրոցական աշխատանքների համար գյուղխորհրդի ՄՏԿ-ի կից պետք և ստեղծել հանձնաժողով, վորի մեջ մանեն կուս., կոմյերիտ կազմակերպությունների, գյուղխորհրդի, կողանտեսության ներկայացուցիչներ, բժիշկ, ուսուցիչ: Հանձնաժողովը նախ և առաջ պիտի նշի ամեն մի կազմակերպության կոնկրետ անելիքը, նըրանց հետ պայմանագիր կապի, հաշվի առնի 3—7 տարեկան յերեխաններին և ըստ այնմ մանկահաստատությունների քանակին ու ծավալը վորոշի:

ՇԵՆՔԻ ՀԱՐՑԼ

Շենքի հարցը առաջին կարեվոր հարցերից մեկն և պետք է ոգտագործել նախկին կուլտային աների հարժարագույնները, աղատել այդ տները այլ հատկացումներից և հարժարեցնել մանկահապարակի պահանջներին: Կարելի յեր համաձայնությամբ և ժամանակագորապես ոգտագործել կողանտեսականների տները, դպրոցի 1—2 մեջակը, խրճիթընթերցարանի, սոց. կուլտուրայի տան մի մասը և այլն. Բայց և այնպես պետք է վոր այդ ոգտագործման ժամանակ

պահպանվեն սանիտարական-առողջապահական կանոնները։ Շենքի հետ մեկտեղ պետք է ունենալ փոքրիկ պարտեզ, ծաղկանոց, խողերի հրապարակ։

Ցերե գյուղում զպրոցի նոր շենք են կառուցում, անհրաժեշտ և համաձայնության գալ և նրան կից շենք կամ բաժին կառուցել մանկապարտեղի համար։

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Նախադպրոցական հաստատություններ կազմակերպելու և պահելու համար պետք է նյութական միջոցներ ունենալ։ Յերկրկուտնումիւության ցուցմունքների համաձայն, կողանուստկանների յերեխաններին սպասարկող մանկապարտեղներն ու հրապարակները հիմնականում կողմնահության միջոցներով են պահպելու Անհրաժեշտ և նոր և այլ կազմակերպություններից (սպառառով, գյուղվարչուրդ, «մանուկների բարեկամ» ընկերության բջիջ և այլն) նյութական ոժանզակություն ստանալ։ Շենքի, կահավորանքի, նորոգության պետք են մասնակցին կողմնահութականները, իսկ մնացի ուժեղացման համար կարելի յե ծըռ նողական ժողովների վորոշմամբ հատուկ հատկացումներ առնել։ Յեթի Ռայլուսրամինը հատուկ փոնդ ունի, ապա կարելի յե և այդտեղից վորոշ ողնություն ստանալ։

ԿԱՇԱՎԱՐՈՒՄԸ

Նախապես պետք է կահավորանք առանդընել։ Վորոբեալի կահավորանքը թանգ չնոտի, անհրաժեշտ և ոգտադրժել խոր։ և կուտանտիսությունների արհեստանոցները և «շաբաթորյակների» կարգով մահճականներ, նատարաններ և խաղալիքներ շինել Մի շաբաթոր կարելոր բաներ, յեթե համրավոր չե սեփական միջոցներով շինել պետք են ստակած քաղաքուր գնել։

ԿՈՒԼՏՈՒՐ. ԿԵՆՅԱՋԱՌԱՅԻՆ ԿԱՌՊԵՐԱՑԻԱ

Մանկական հաստատությունների կազմակերպման, նյութական առողջապահական և մանկավարժական աշխատանքները ապահովման, առողջապահական և մանկավարժական աշխատանքները կուտարեցին կոռուպտացիան։ Են աղքարնակչությանը կոռուպտացիանը խնդիրների շուրջը և կազմակերպությունների կուտարեցին խնդիրների շուրջը և կազմակերպությունների, մանկապարտեղների, մանկահրապարակների կուտարեցին կոռուպտացիայի կանոնադրությունն ու նրա կազմակերպման հետ կապված խնդիրների ժամանակում մանրամատն առցունքներ պետք են ստանալ Ռայլուսրամինը և ըստ այնմ կազմակերպչական աշխատանքներ տանել։

Նախադպրոցական մասնագիտ աշխատազների պակասը լրացնելու համար, պետք է կողմնահութականներից, բանվորներից և բանվորների կանանցից քննորբել և ուզարկել կարճատեղ դասընթացքները՝ հետազում հրապարակներում աշխատելու համար։ Դաստիարակչական աշխատանքների վորակը մեծ չափով կախում ունի աշխատակիցների պատրաստությունից։ Անհրաժեշտ և խուսափել անցյալ տարվա սիամից, յերբ նախադպրոցական դասընթացը եյին ուղարկում աշխատանքի անընդունակներին։ Առաջին հերթին դասընթացը պետք է ուզարկել կանանց և կարյուրիտ ակտիվից, վորոնք 1-ին աստիճանի կըրթությունն պետք է ունենան։ Ի՞արկե կարճատեղ դասընթացքներն ամեն ինչ տալ չեն կարող և նախադպրոցական աշխատողը աշխատանքի ընթացքում իր պատրաստությունն ու վորակը պետք ե բարձրացնի. սրա լավագույն միջոցը հանդիսանում են նախադպրոցական կրթության հեռակա դասընթացքները *։

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Նախադպրոցական հաստատությունների մասսայական տեսակներկա ցըանում 3 տեսակի յեն բաժանվում։ 1) Մանկաթափառակը սեղանային ե, կազմակերպվում և գործում և արտադրական բուռն աշխատանքների ժամանակ. 2) Մանկապարտեզը ամբողջ տարին գործում ե, իսկ արտադրական աշխատանքների ցըանում (ամանը) նոր, բայց ժամանակավոր խմբեր և ունենաւմ, և 3) Մանկական օջախ, վոր ամբողջ տարին գոյությունն ունի և յերկարացրած որով և աշխատում։ Նախադպրոցական հաստատությունները լինում են մեկ կոմպլեկտային (մի խումբ) և յերկու ու ավելի կոմպլեկտային։ Յերկու և ավելի խմբեր ունեցած գեպքում, խմբերն ըստ տարիքի յեն կազմվում կրտսեր յեվ ավագ խմբեր։ Բայց այս հիմնական յերեր տեսակի հաստատություններից, զանազան հաստարակական-քաղաքական կարճատեղ կամպանիաների ժամանակ կազմակերպվում են մանկան սենյակ վորը մի քանի ժամով հնարավորություն և տալիս մայրերին մասնակցել ժողովներին և այլն հաստարակական աշխատանքներին։

Ամեն մի ույոյն ունենալու յե ամենապակասը 1 որինակելի մանկահաստատություն—մանկապարտեղ կամ մանկահրապարակ։ Արինակելի հաստատությունը պետք է ունենալ լավագույն շենք, կահա-

*). Հյուսիսային Կովկասի հայկ. մանկավարժական տեխնիկումն կից նման դասընթացքներ կան, վորի հետ պետք ե կազմել. հացեն՝ Ռոտով. Դոն. 28-այ լինիա № 7, Արմ. ուժ. տեխնիկում.

վորանք, նյութական լիովին բավարարություն, ուժեղ կադրեր, վորապեսդի մանկավարժական դաստիարակչական աշխատանքը լավ հիմքի վրա դնելով, կարողանա մյուսներին ևս ոգնություն ցույց տալ:

Այս բոլոր տիպի հաստատությունների դաստիարակչական խընդիրները, նպատակն ու մանկավարժական աշխատանքի բովանդակությունը հիմնականում նույնն են:

Նախադպրոցական հաստատության աշխատանքի նորմալ ու լավ ընթացքը կապահովվի, յեթե նախապես մի շարք «մանր» խնդիրներն ևս լուծված լինեն. դրանք են՝ 1) Հաստատության տեղը պիտի վորոշվի բրիգադային սկզբունքից յենելով, այսինքն՝ մանկապարտելը (հրապարակը) կողմանական արագագի բնակավայրին և աշխատավայրին (ըստ հնարավորության) մոտ գտնվի; 2) Նախապես բացառական աշխատանք տարվի հետամնաց ու նախապահարումներով կաշկանդված ծնողների մեջ; 3) Շենքը նախապես կանոնավորված լինի; 4) Ընդունվող յերեխաների ցուցակի վերջնական հաստատումը համապատասխան մարմինների կողմից հաստատված լինի, վոր հետագայում թյուրիմացիություններ չը լինեն; 5) Յերեխաների բժշկական ստուգում կատարվի; 6) Յել ու մտի նախահաշիվ կազմվի; 7) Սննդի խնդիրը կարգավորած լինի, վոր վարիչը նախապես իմանա, թե ինչ քանակի և ինչ սթերքներ և ստանալու գեթ առաջիկա 10-որյակում, վոր սննդի մեջ բազմազանություն մացնի; Անունդ ընդունելը պետք ե կատարվի վոչ պակաս 3—3^{1/2} ժամ անգամ; 8) Սպասարկող կաղող պատրաստ լինի — ամեն մի հրապարակ պի տի ունենա ա) վարիչ, բ) դաստիարակչուհիներ՝ 35 յերեխային մեկ դեկավարի հաշվով, գ) խոնարարուհի, հավաքարարուհի; Վորովինետեղ ոսճիկով աշխատողների թիվը սահմանափակ ե, ապա կոմյերիտականների, պատգամափորուհիների, մայրերի, պիոներ աշակերտների աշտիվից կուլտ բանակալիններ պետք ե ունենալ; 9) Մանկահաստատությունը պետք ե ունենա իր խորհուրդը, վորի կազմի մեջ մանումներ՝ մանկահաստատության բոլոր աշխատակիցները, հաս. կազմակերպությունների ներկայացուցիչներն ու ամեն մի խմբի ծնողներից 1—2 հոգի:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադպրոցականի տարիքը մարդու որդանիզմի զարգացման կարելոր և պատասխանատու շրջաններից մեկն ե. Այս շրջանումն է ձեվակերպում որդանիզմը, վոսկրացումը, մկանների զարգացումը, ներփային մկանների կայունացումը. մտածողական գործունեյության և վարքի սկզբանավորումն առավելապես այս շրջանումն է կատարվում: Նախադպրոցականի որդանիզմի զարգացումը 2 ուղղությամբ ե ընթանում՝ 1) հասակի բարձրացման և մարմնի խոշորանալու ուժեղ:

պրոցեսը և 2) վորակական փոփոխությունները, յերթ մեկ մկանը փոխարինում և մյուսին, կրծիկային մկանները վերածվում են վուկրայինի, վորպիսի ժամանակաշրջանում յերեխայի վուկորը շատ հետությամբ նորմայից շեղվելու յենթակա յել լինում:

ՄԱՆՈՒԿԻԿԻ ՇԱՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մանուկի խոշոր մկանները շուտ են դարձանում, իսկ մանրերը զարգանում են 5—6 տարեկանից սկսած: Սրանից յենելով, կրտսեր խմբի յերեխաներին պետք է հնարավորություն տալ խաղալ ավագի, կապի, շինանյութերի, փայտի ձողերի ու ողերի հետ, մուրճ գործածել, դնդակ խաղալ: Վարպես մանր մկանները զարգացնելու նախապատրաստական վարժություններ, յերեխաները պետք ե նկարեն, թուղթի կտրեն, ներկեն: Շարժուն խաղերը պետք ե ունենան պարզ ժարժումներ և վոչ բարդ կանոններ:

5 տարեկանից սկսած պետք ե կենարոնացում և մանրակրկտություն պարունակող վարժություններ գործադրվեն: Այս տարիքի յերեխաները աշխատանքն ավելի խնամքով պիտի կատարեն: Աշխատանքի տեսակները լինելու յեն՝ նկարչություն, թուղթ կտրել հյուսնական դործիքներ գործածել, կարել, ծեփել, և այլն: Զպետք ե մոռանալ նաև խոշոր շարժումներ կատարելը. դրանք ամրացնում են մը կանոնները և արագացնում արյան շրջանառությունն ու մարսողականությունը: Վոչ մի դեպքում տարիքային առանձնահատկությունները չպետք ե մոռացվեն— 3 և 7 տարեկաններին միենույն մեծության դործիքներ տալ չե կարելի: Ավագ յերեխաները պետք ե մազլցում, ցաւկումներ կատարեն: Շարժողական գործունեյությունը պետք ե մարդու ողում կառարվի, վորպեսի ծախսված հներգիան հեշտ վերականգնվի:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Դորքան յերեխան փոքր ե, այնքան ել նրա ուղեղը թույլ է զարգացած: Երա տրամադրանական (հետիվողական) գատողությունը թույլ է: Նա շատ ուժեղ ազդվում է դուրեկան և անդուրեկան դեքերից: Ոգտակարության յեվ անհրաժեշտության ըմբռնումը նա համարյա չունի:

Անա թե ինչու վողջ մանկավարժական աշխատանքը կառուցվում է դրական հմոցիաների (հույզ, վերապրում) վրա:

Ցերը ուզում ենք այս կամ այն յերեխույթը յերեխայի համար մատչելի զարձներ պետք ե զգարթ ու վառ գույների նկարագրություններ տանք:

Յերեխան կյանքի փորձառություն ձեռք և բերում և շրջապատի ուսումնանիրությամբ, նրա մտածողության զարգացման համար անհրաժեշտ են կոնկրետ պատկերացումների նյութեր, առարկաներ, գործողություններ. վերացական սնբունումները նրան դեռևս մատչելի չեն:

ՅԵՐԵԽԱՅԻ ԿԱՅԱԽՆՈՒԹՅԱՆ Ս.ՍՏԻՃԱՆՆ ՈՒ ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՏԵՎՈՂԱԽՆՈՒԹՅՈՒՆՆ

3—4 տարեկան յերեխան աչքի յև ընկնում իր անկայունությամբ, նա չի կարող յերկար ժամանակ զբաղվել միենույն դորձով վորքան ել դա հետաքրքրական լինի, սրանից յեխելով կրտսեր խըճրի զբաղմունքի մի տեսակը պետք է տեսի վոչ ավել, քան 10—20 րոպե, իսկ ավագ խմբի զբաղմունքը՝ 15—30 րոպե: Հաշվի պետք է առնվի նաև զբաղմունքի զժվարությունը, աշխատանքը միշտ զժվար են, քան խաղը: Ամենից ավելի հոգնեցնող զբաղմունքներն են՝ կարը, հյուսությունը, նկարելը, ազմկոտ և շարժուն խաղերը, յերգով ոիթ, միկական խաղերը, զորոց ժամանակ յերեխան լարված եւ ու շատ եներգիա յի կարցնուք: Թեթեվ տեսակի աշխատանք են՝ զրույցը, աղատ խաղերը, նկարներ նայելը և այլն: Աշխատանքի ուղիղ կարմակերպման համար պետք է թեթեվ ու ծանր, նստած և շարժուն զբաղմունքներն իրար հաջորդեն: Պեսք և աստիճանաբար յերեխայի մեջ հաստատակամություն և կենարունացում զարդացնել: Յերեխան պետք է սովորի և վարժի սկսած գործը վերջացնելուն:

Նախադպրոցականի հիշողությունը պահաս և զարգացած, քան հասակավոր մարդուն, միանգամբ շատ տպակորություններ և զիտելիքներ չպետք է տալ այլապես նրա մտքում շփոթ առաջ կցա: Արդամ մեջ խաղերը, պատմվածքները, աշխատանքը տեսակներով սակավաթիվ պետք և լինեն, զօրպեսպի զբանց ազդեցությունը նախ քան նորին անցնելը, զբական հետեւանք ունենա:

ՆԱԽԱԴՊՐՈՑՅԱԿԱՆԻ ՄՈՒՏԾՆ ՈՒ ՄՏԱԳԱՏՐԱՆՔԻ

Յերեխանների մեջ նկատվում է մտապատրանքի (Փանտագիա) հակում. շատ անգամ իր մտապատրանքը նաև ընդունում է վորպես իրողություն, որինակ՝ փայտը նրա համար կարող և փոխարինել ձիւն, սավանակին և այլն: Նա իր ընկերներին կարող և պատմել, թե ինչպես ինքն իսկական ռավանակ և նստել կամ ծին հեծած հեռու տեղեր զնացել: Հին մանկավարժությունը յերեխանների այդ հակումը նկատելով, ել ավելի խորացնում եր դա՝ զանազան հեթյաթներ ու առասպելներ պատմելն անհրաժեշտ համարելով:

Յերեխայի յերեխավայությունը պետք է զարգացնել, կապելով այդ ընտառապատճեն կոնկրետ նյութերի, առարկաների հետ և հնարավություն տալով նրան իր մտապատրանքը գործում աբացողելու: և իսպի ու աշխատանքի մեջ ստուգելու:

Հասակավորները շատ անգամ յերեխայի սուտը շփոթում են մտապատրանքի հետ: Սուտ խոսելը գիտակցաբար և լինում, իսկ մըտապատրանք ստեղծելով յերեխան հավատում ե նրա իրողություն լինելու մեջ: Ճիշտ և, այս տարիքում ինքնապաշտպանության կամ այլ պատճառով զիտակցաբար սուտ խոսվում է, բայց դա պատճով, վախեցնելով կամ հանդիմանությամբ վերացնել չի կարելի. պետք է ուշադիր կերպով պարզել ստախոսության պատճառը և ցույց տալ այդ ստախոսության վատ հետեւանքները,

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴԺԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՆԵՐԱԿԱՎՈՒԴ

Սովորաբար մանկապարտեղում լինում են այնպիսի յերեխաններ, զորոնք զժվարությամբ են յենթարկվում մանկավարժական ազդեցության և խանդարում են խմբի ընդհանուր աշխատանքը Շատ անգամ զիկավարներն ու ծնողները չեն խմանում ինչպես վարփել նրանց հետ, ինչպես ազգել նրանց վրա: Նման յերեխանների նկատմամբ այս կամ այն յեկրակցության (մանավանդ կազմակերպչական) գալու համար, պետք է պարզել նման վարդի պատճառները Դաստիարակչական ազդեցության զժվարությամբ յենթարկվելը սովորաբար սոցիալական անբարեկանության հետ և այդ բոլորը բերում ե մանկապարտեղ նման գեղագույն պատճառների կենցաղը, և զրա համար համապատասխան աշխատանք տանել ծնողների, հասարակության մեջ:

Շատ անգամ զժվարությամբ զասաիարակվելու պատճառները բզմում են յերեխայի որդանիզմի զբությունից: Դժվար են դաստիարակվության անգամ զարդարելու, կամ ընդհակառակը, յերես են տալիս, նա սիստեմատիկ գաստիարակչական ազդեցության զժվարությամբ և յենթարկվում: Շատ անդամ յերեխան իր ընտանիքի մեջ, զրացիների մոտ կամ փողոցում վատ որինակներ և տեսնում, հայնայնք և լսում և այդ բոլորը բերում ե մանկապարտեղ նման պետք և կազմակերպել մանուկի կենցաղը, և զրա համար համապատասխան աշխատանք տանել ծնողների, հասարակության մեջ:

Շատ անգամ զժվարությամբ զասաիարակվելու պատճառները բզմում են յերեխայի որդանիզմի զբությունից: Դժվար են դաստիարակվության անգամ զարդարելու, կամ ընդհակառակը, յերես են տալիս, նա սիստեմատիկ գաստիարակչական ազդեցության զժվարությամբ և յենթարկվում: Դատ անդամ յերեխան իր ընտանիքի մեջ, զրացիների մոտ կամ փողոցում վատ որինակներ և տեսնում, հայնայնք և լսում և այդ բոլորը բերում ե մանկապարտեղ նման պետք և կազմակերպել մանուկի կենցաղը, և զրա համար համապատասխան աշխատանք տանել ծնողների, հասարակության մեջ:

Մանկավարժական աշխատանքի վատ դրված լինելը, մանկական հաստատության նեղվածքությունը, և գրպոված, ջղային և խստապահանջ դաստիարակչուհիները հանդիսանում են մանկավարժական ազգեցության գժվարությամբ յենթարկվող յերեխաների թվի աճան նպաստողներ։ Դաստիարակության գժվարությամբ յենթարկվելու պատճառները հայտնաբերելով ու վերացնելով, մանկավարժական հաստատության մեջ դեպի այդ յերեխաները ինսամքուտ վերաբերմունք ունենալով, մանկավարժական աշխատանքի լավ կազմակերպմանը կարևոր յե նման գժվարությունները վերացնել կամ գեթ թեթև վացնել։

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՊԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յերեխայի որպանիկը զեռևս ամրապնդված չլինելով, շարունակ աճելով, վարակիչ հիվանդությունների դեմ կռվելու թույլ ուժ է ունենում. զբա վրա ալիքացրած և այն, վոր հիվանդությունների տարածմանը նպաստող պայմանները զեռևս շատ կան, մանուկը բաղմապիսի հիվանդությունների յե յենթարկվում: Թեև նախադպրոցական աշխատողն ինքը բժշկությամբ չի կարող զբաղվել, դա բժշկի գործն ե, բայց նա պետք ե զեթ տարածված հիվանդությունների (ծաղիկ, քութեց, ղիֆտերիտ, կապույտ հազ և այլն) նշանները կարողանա վորոշել վոր զբանց տարածման դեմ և բժշկության համապատասխան միջոցներ ձոռք առնի: Նախադպրոցական աշխատողը պետք ե այդ հիվանդությունների մասին դրած զեթ բրոցյուրային և հեշտությամբ ձեռք բերվող զբականություն կարդա:

ՆԱԽԱԴՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԵԳԻՄՆ ՈՒ ԱՌԱՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Մանուկի որգանիզմի կանոնավորը զարդացման և մանուկի ուղիղ դաստիարակության համար անհրաժեշտ ե մանկահաստատության առողջապահական գոյացմաններ և որվա կարդ ու կանոն սահմանել:

ՈՐԳԱԿԱՐԳԻ ՈՒ ԿԱՆՈՆԸ (ՈԵՃԻՄ)

Որվա կարգ ու կանոնը նախապես պետք է սահմանել և ուժին աշխատանքային, թիթեվ, ծանր, շարժական և նստած դրազմունքների հաջորդականություն։ Յերեխան պետք է վարժվի վորոշ ժամին վեր կենաց, ուտել, խաղալ և այլն։ Որվա կարգ ու կանոնի պահպանումը կարեվոր է որդանիքության և յերեխայի ցանկալի վարքի տիսակետից։

Որքա կարգ ու կանոնը սահմանելիս պետք է հաշվի առնել մանկական որդանիքմի առանձնահատկությունը, և մանկական հաստատության աշխատանքը շաղկապել ընտանիքի պայմանների հետ:

միզն, սրբնակելի կարդ ու կանոնը ՄԱՆԿԱՀՐԱՄԱՐԱԿՈՒՄ

ժամը՝ 7—8—3 Երեխաների գալը, խալաթներ հագնելը (յեթե կա աղատ խաղեր:

« 8 — 8^{1/2} Նախաճաշի պատրաստություն և ձեռք լվանալը:

« 8^{1/2}—9^{1/2} Նախտճաշ, հերթապահները հավաքում են հրապարակը շենքը:

« 9^{1/2}—11 Պահային զբաղմունք:

« 11—12 Արեփ լոգանք, մարմինը ջրով լվանալ:

« 12—12^{1/2} Ազատխաղեր, հերթապահները ճաշի պատրաստություն են տեսնում, ձեռքեր լվանալ:

« 12^{1/2}—1^{1/2} Ճաշ և բերանները ողողել:

« 1^{1/2}—3^{1/2} Քուն:

« 3^{1/2}—4 Քնից հետո ուտել:

« 4 — 5. Պտույտ, աղատ խաղեր, պատմություն պատմել: Ժամը 5-ից հետո շորերը փոխում են ու առն գնում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ, — Կրտսեր խմբում կայմակերպված զբաղմունքները ժողովակի կրնատան հաշվին յերկարացվում են աղատ խաղերի տեվողությունը:

ՈՐՎԱՌ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԵԶՈՒՄ
(ԶՄՈԱՆԸ)

Ժամը 9—10 Յերեխսաների գալը, աղատ խաղեր, նախաճաշելու
պատրաստվել։
« 10—10⁴⁰ Նախաճաշ, հերթապահները հավաքում են սենյակը։
« 10⁴⁰—12 Պլանային զբաղմունք։
« 12—1 Բաց ոդում լինել։
« 1—2 Պատրաստվել ճաշելու և ճաշել։
2—3 Բուն։
Վորովհետեւ կը տսեր խմբի կաղմակերպված զբաղմունքը 30—40
րոպեյով պակաս և ավագ խմբից, ապա կրտսերները ավագներից ա-
վելի շուտ պիտի ճաշեն։ Կաղմակերպչական աշխատանքներն այնպես
պետք ե տանել, վոր աշխատանքի ամեն մի տեսակը կանոնավոր կա-
տարվի։ Անհրաժեշտ ե խուսափել որվա կարգ ու կանոնը խախտելու
դեպքերից։ Որվա կարգ ու կանոնի տախտակը կախել աչքի ընկնող
տեղում, վոր ծնողները ծանոթանան դրա հետ։

ՄԱՆԿԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ—ԱԹՈԴԶԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Աշխատանքներն ու զբաղմունքները մեծ մասամբ բացողյա պիտի լինեն. Պնտք և ջանալ շնչոքի ներսում լինել միայն վաս յեղանակնե-

թիւն: Յերեխաների քունը նույնպես բացողյա պետք և ահղի ունենա
և հնարավորություն չլինելու դեպքում միայն հերուսմ անցկացնել:
Յեթե մանկանքապարակը հատուկ բակ և պարտեղ չունի, պետք և
համաձայնության դալ կոլտնտեսության հետ ոգտվելու կոլտնտեսու-
թյան այդուց:

Մանկահրապարակը, նրա հարակից շենքերն ու հողամասը մա-
քուր գրության մեջ պիտի լինին: Շենքը (հատակ, պատեր, առաստաղ,
դռւու, պատուհան) պետք և զոչ պակաս, քան հնդորյակը 2 անգամ
մաքրել: Հատակը, պատուհանները, կանկարասիրը ամեն որ թաց
չըրով սրբել: Սենյակներն ամեն որ 1 2 ժամով ողափոխել: Լավ յեղա-
նակներին պատուհանները մշտապիս բաց թողնել: Անկողնի պարագա-
ները հնդորյակը սի անդամ արեի հանել:

Հատուկ ուշագրություն գարձնել խոհսնոցի և սննդի պատրաս-
տության մաքրության վրա: Ամանեղենները գործածաթյունից հետո
տաք ջրով լվանալ, մաքուր սրբիչով չորացնել և փակ տեղ պահել:

Հնդորյակը մի անգամ սպիտակեղենները փոխել:

Մանկահրապարակին հարակից շենքերն ու հողամասերը մաքուր
ոլիտի լինեն, ջրվին, ավրիկն:

Զբո՞րը փակ պահել աղտեղությունների արկղն ու փոսը անպայ-
ման ծածկված, սակայն անցք թողնելով և շենքից փորքան կարելի
յե հեռու պահել: Ավագը 4 կողմից տախտակով շրջափակած պետք և
պահել:

Հատուկ ուշագրություն գարձնել մանուկների արտաքնօցների
մաքրության վրա: Ամեն մի 10 յերեխայի համար 1 նստելամեղ պիտի
լինի: Թույլ չտալ վոր յերեխաններն արտաքնօցում հավաքվեն, դա վատ
և աղջում առողջության վրա և ձեռնաշարժության (ոնանիզմի), տ-
վելորդ հետաքրքրության տեղիք կարող և տալ:

Բժիշկը պետք և հետեւ մանկահաստատության սանիտարական և
առողջապահական գրությանը և համապատասխան ցուցմունքներ տա,
վորոնք անողայժան պետք և կատարվեն:

Ա.ԲՈՂՋԱԳԱՀԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մանկահրապակը պետք և յերեխաններին առողջապահական ու-
նակություններ տա: Տարբական առողջապահական ունակություն-
ները հետեւյաններն են:

1. Յերեխան պիտի կարողանա առանց կողմնակի ունության ձեռ-
ները, յերեսն ու ականջը ոճառով լվանալ:

Առեն սի յերեխա առանձին յերեսսրբիչ (փոքր) պիտի ունենա և
յերեսսրբչի ջոկ տեղ կախարանի վրա:

2. Սեփական գտվաթներով բերանը ողողել:

3. Կարողանալ թաշկինալ գործածել:

4. Արտաքնօցից ոգտվել այնակա մաքրություն պահպանել և
ամեն հաճախումից հետո ձեռները լվանալ:

5. Աւտեկու ունակությունները՝ ուրիշի պնակից չուտել լավ ծա-
մել, սեղանը մաքուր պահել:

6. Շորերն ու կոշիկը մաքուր պահել, կոշիկն ու շորերը քննելին
վորոշ տեղ գնել:

7. Շենքը մաքուր պահելու ունակություններ ունենան կանկա-
րասիրը, ուսումնական իրերն ու խաղալիքները մաքուր պահել, մեծե-
րին ոգնել շենքը մաքրելու, թաց շորով կանկարասիրնու խաղալիքները
սրբել և այլն:

ՍՆՈՒՆԴԸ

Մանուկների փեղիկական և մտավոր զարգացման անհրաժեշտ
պայմաններից մեկը քանակավես և վարակավես բավարար և կանոնա-
վոր սնունդ ստանալու և. 10 ժամյա աշխատանքային որ ունեցող ման-
կահաստատության մեջ ամենապահական պետք և 3 անգամ կերպ-
վել: Մնունքը շնորհքով պատրաստած և համել պիտի և վոչ ա-
մեն որ միատեսակ:

Ամառվա ընթացքում գլխավորապես կաթեղին, ինչպես նաև կա-
նաչներ և մրգեղեն պետք և տար:

Արվա ճաշացուցակ (մենյու) կազմելիս՝ պետք և յելնել մանկան
որգանիզմին անհրաժեշտ քանակի անողանյութեր տալու պահանջից: Այդ
նյութերն են՝ սպիտակուցներ, յուղեր, ածխաջրածիններ, վիտամիննե-
րի, աղեր:

Սպիտակուց կա կաթի, հավկթի, մսի, հացի և զանազան խմորե-
ղենների մեջ:

Ճարագ (յուղ) կա յուղի, ճարպի, կաթի, մսի, բուսական յուղերի
մեջ: Մանուկների համար կենդանական և ձկան յուղն ավելի դյուրա-
մարս և, քան բուսական յուղերը կամ մարգարինը:

Վիտամիններ կան սրտուղների, կանաչեղենի, ձկան յուղի, հավկթի
զեղնուցքի և այլ ուտեկեղենների մեջ: Վիտամիններ ամենից շատ կա-
նաչեղենների և պտուղների մեջ կան, սրա համար յերեխաններին պետք
և տալ խաղող, ինձոր, պամիզոր, ձմեռուկ, սեխ, զաղար, կալտոֆի,
վարունգ և այլն: Վորովիտեան շատ յեփելուց նրանք կորցնում են վի-
տամինները, ապա ավելի լավ և մրգեղենը կամ բանջարեղինը հում
գրությամբ տալ ուտելու, բայց լավ լվանալուց հետո:

Աղերը մեծ զեր են խաղում որգանիզմի կենսունակության մեջ:
Աղերի պակասության պատճառով մանուկները թալկանում, ախորդակը
կորցնում, հիվանդանում են:

Բացի կերակրի աղից, աղեր կան պտուղների և կանաչեղենների մեջ: Չժամանը, յերբ պտուղ ու կանաչեղեն չ'ա կամ քիչ կա, պետք և յերբեմն և վոչ մեծ քանակությամբ տալ աղած կամ թթու դրած կաղամբ, լորի, պամփոր, խնձոր և այլն:

Ճաշացուցակ պատրաստելիս պետք ե, հաշվի առնելով յեղած մթերքները, աշխատել սնունդը բազմատեսակ դարձնել:

3—8 առենկանեների որդա ուտելիքը

Առենկաների տեսակը	Քանակը	Ինչով փոխարինել
Սև հաց	100 գրամ	Սև հացով
Սպիտակ հաց	100 գրամ	
Կաթ	2 բաժակ	
Միս	100 գրամ	Ճուկ, ձու, լոբի, ոփան
Յուղ կովի	25 գրամ	սեր, խոզի յուղ, միս,
Զու	1 հատ	Ճուկ մաճառակ այլ
Կարտոֆիլ	150 գրամ	կանաչեղենով
Թարմ բանջարեղեն	150 գրամ	
Չափար, կորկոս	40 գրամ	
Շաքար	25 գրամ	մեղմով
Թարմ պտուղներ	2 խնձոր կամ 2 տանձ կամ 200 գր.	
	այլ պտուղ	

Եյս սննդանյութերի տեսակներն ու քանակը 4 անգամ ոււտելու հաշվով ետրված, նկատի ունենալով, վոր յերեխաները տանն ել են ուսում, պետք ե այս ցուցակի մեջ հիշած ուտելիքների 80 առկոսը տալ: Կարելի յե հետեյալ կերպ կերակրել (վորպես որինակ):

Խոխանած՝ կաթ և սպիտակ հաց, թեյ և կարագով հաց. թեյ, հաց և ձու. կաթով սուրճ և հաց. բողկ և կարագով հաց, յեփած կարտոֆիլ՝ պամփորի և վարունդի հետ:

Ճաշ Ա. Կորտոֆիլով, մսով ապուր, սիսեռով ապուր, բորշ, մախու (շշե), բրնձով կամ վերմիջելով կաթնապուր և այլն:

Բ. Մակարոն կաթնեղենով, մսի կամ ձկնե կատլետ, պտուղներով իմորեղեն, տոլմա, տապակած կարտոֆիլ, վարունդ, կիսել և այլն:

Տասնորյակում մի քանի անգամ, իսկ յեթե ճնարավոր և ատեն որ, ճաշին լավ ե տալ թարմ պտուղ, կամպոս, կիսել, մածուն:

Յերրորդ անգամ ուտելիս (ժ. 3—4-ին) տալ կամպոս ու սպիտակ հաց, խաղող ու հաց, շաքարով մածուն, թան, բրնձե կամ ձավարե կաթնապուր, սերով, մսով, պտղով խմորեղեններ և այլ ուտելիքներ:

Հերթակաները սեղանը լավ պետք ե դասավորեն: Ամեն մի յերեխա պիտի ունենա իր վորոշ տեղը: Դաստիարակչունին յերեխաների հետ ե ուտելու և իր անճնական որինակով ցույց ե տալու ուտելու կանոները: Ուտելու ժամանակը մասնավանդ ընդմիջումներին, պետք չե-

րացարձակ լուսվայուն պահպանել: Ճաշի տեսզությունը 30—40 րոպեցից ավելի լինելու չե, նախաճաշը՝ 20 րոպե:

Ուտելուց առաջ ամեն անդամ պետք ե ձեռները լվանալ, իսկ ուտելուց հետո՝ բերանը ողողել:

ԲՆԻ Ա.ՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մեծ շարժունաւթյան հետեւանքով յերեխաները շուտ հոգնում են. ուժերը վերականգնելու համար ճաշից հետո քնելու կարգ պետք ե սահմանել: Լավ է քնել պարտեղում, ուր տեղական ստվեր կա. յեթե դա հնարավոր չե, ննջասենյակի պատուհանները բաց, բայց շղարշով ծածկված պիտի պահել:

Յերեկը պետք ե քնել ճաշելուց 15—20 րոպե հետո միայն և նախապես վրուները լվանալուց հետո:

Քնած յերեխային արթնացնել չի հանձնարարվում: Յերեխան պետք ե քնից կշտացած արթնանա կամ վերկացած յերեխաների պատուից զարթնիք: Արթնանալուց հետո հագվելու մոմենտը շատ նպաստավոր ե ինքնասսպասարկման ունակություններ տալու տեսակետից:

ԶԳԵՍՏԻ Ա.ՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Յերեխայի զգեստը թեթև ու լայն պիտի լինի, վոր շարժումները չը կաշկանդի: Ամառ ժամանակ կարելի յե բավարարվել կարճ ներքնավարտիկով կամ կոմբինացիայով, վորոնց գործածելը սի անգամից չը պիտի լինի, վորպեղի մարմինը արեկից չայրվի: Յերեխայի մարմինը վորքան կարելի յե շատ (իհարկե վոչ այրվելու աստիճան) արե և ող պիտի ստանա:

ԱՐԵՎԻ ԼՈՒՑԱՆԵՐ

Արեգակի ճառագայթները շատ մեծ նշանակություն ունեն որդականիզմի ուղիղ զարգացման և աճման համար, այս իսկ պատճառով որդակար ու կանոնի մեջ պետք ե արեկի լոգանքը նախատեսել:

Արեկի լոգանք լավ է լնդունել մինչև յերեկ. Ժամ 12-ը, վորով հետեւ այդ ժամերին ուլտրաֆիլետային ճառագայթները լավ են ներկործում: Ամեն սի մանկահաստատության յերեխաների արեկի լոգանք կազմակերպելու, տեղի, տեղողության և այլն ինդիքները լուծելու համար պետք ե նախապես բժշկի խորհուրդներն ու ցուցմունքներն ստանալ և ըստ այնս գործել:

ԽԱՂԵՐԻ ՅԵՎ. ԱՇԽԱՏԱՆՔԱԾԻ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ Ա.ՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Յերեխայի խաղի և աշխատանքի հիմնական տարբերից մեկը շարժողականությունն եւ չաշվի առնելով զրանց առողջապահական աղղեցությունն որգանիզմի վրա, պետք ե աշխատել խաղերն ու աշխատան-

Քը ըստ Հնարքավորության բացողյա կատարել: Պետք է հետեւ խաղալիքների մաքրությանը (լվանալ): Աշխատանքի գործիքները պետք ե համապատասխանեն մանուկի տարիքին և ուժին, վոր ավելորդ հոգնածություն առաջ չը բերեն:

ՆԱԽԱԴՐՈՅԱԿԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Նախադրոյական հաստատությունը, վորպես ժողովրդ, լուսավորության խորհրդային սիստեմի մի ողակ՝ նպատակադրուժ և յերեխաներին կամունխատական գասահարակություն տալ—տալ մանուկին ռմատավոր կրթություն, պոլիտեխնիկան գասահարակություն և ֆիզիկական դարձացում» (Մարքս), ապահովելով զրանց դասակարգային պրոլետարական բովանդակությունն ու ուղղությունը:

Կու. դաստիարակության հիմնական խնդիրից մեկը աճող սերնդին դասակարգային դաստիարակության, դասակարգային ուղղություն տալն եւ Նախադպր. հաստատության վողջ մանկավարժական աշխատանքը դասակարգային-ըլլորետարական ուղղություն պիտի ունենա: Այդ ուղղությամբ դաստիարակությունը լրիվ ապահովելու համար մենք պիտի ուղղվենք նախադպրոցականի կողմից շրջապատի իմացիոնալ ըմբռնման առանձնահատկություններից, Դործնական աշխատանքների մեջ պետք ե ընդգծել յերեխային շրջապատող կյանքի յերկույթների դասակարգային հյությունը: Մրա համար մենք պիտի ընտրենք մանուկին ըմբռնելի և հետաքրքրական նյութ (որինակ՝ յերեխայի պատկերացումը հարվածային բանվորի, բերքը թագցնող կուլակի մասին և այլն): Պետք ե հաշվի առնել վոր բոլոր յերեխաներ միահասակ չեն բացարում նման հարցերը. սրա համար անհրաժեշտ ե նախապես պարզել տարբեր սոցիալական խավերից յերեխաների տրամադրությունները և ըստ այնմ դաստիարակչական աշխատանքը կառուցել՝ նորատակ ունենալով բոլոր նախադպրոցականներին հավասար պրոլետարական—դասակարգային դաստիարակություն տալ.

ՆԱԽԱԴՐՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ

Մանկահաստատության պլանային դաստիարակչական աշխատանքների մեջ ինտերնացիոնալ դաստիարակության բովանդակություն պիտի լինի:

Ինտերնացիոնալ գաստիարակության հիմնական նպատակը կայանում ե, ինչպես վ. ի. Լենին ե ասում:

«Մի յերկի պրոլետարական պայքարի շահերը համաշխարհային մասշտաբով մղվող պայքարի շահերին յինթարկելու» մեջ:

Սա նշանակում է, վոր մենք նախադպրոցականների մեջ զոյ միայն մեր յերկում սոցիալիզմ կառուցելու համար պայքարելու ցանկություն պիտի ծննդնենք, այլ և դաստիարակենք և նրա մեջ ստեղծնենք սոցիալիզմը ամբողջ աշխարհում իրավականության պայքարի ձրգուում:

Մանկահաստատության աշխատանքների առաջին որերից, դաստիարակչության յերեխաների հետ ունեցած զրույցների միջոցով պահեղելու յե, թե յերեխաներն ինչ զիտեն այլ ազգությունների աշխատավորության կյանքի և աշխատանքի մասին, խաղում են այլ ազգի յերեխաների հետ և ինչ վերաբերմունք ունեն նրանց հանդեպ: Հետո հասարակ ու պարզ որինակներով դաստիարակչության նրանց բացատրելու յե, թե ինչու իրենց կոլտնտեսության, ուայոնի, յերկրամասի, ԽՍՀՄ-ի և այլ յերկրների տարբեր ազգությունների մեջ խտրություն ը պիտի գնել:

Մանուկների ինտերնացիոնալ դաստիարակության հարցում, ինտերնացիոնալ բովանդակություն ունեցող զրույցը, պատմությունները, գրքույկներ կարգալը, կարճ վառանավորներ, լուզունդներ, յերգեր սովորելը, փոքր բեմադրություններ կազմակերպելը մեծ դեր են խաղում:

Մեծ նշանակություն ունի միջազգային հեղափոխական տոնների կազմակերպումն ու անցկացումը: Դաստիարակչության ինքը նախապես պիտի ե լավ պատրաստի՝ նախապատրաստական աշխատանքներ տանելու համար: Նա պետք ե ծանոթանա հեղափ. տոնների (որինակ՝ կանանց որը, Մայիսի 1-ը, միջազգային պատանեկական որը, միջազգ մանկական շաբաթը, պաշտպանության որը, Հոկտեմբերյան հեղափոխություն և այլն), նրանց հյության ու նշանակության հետ: Նա պետք ե ծանոթանա թիւ այս կամացին տոնը տվյալ տարում ինչ լոգունդների տակ ե տարգում, ինչ պլանով ե անցկացվելու այդ տօնը կոլտնտեսության մեջ, զյոււզում: Այս ընդհանուր խնդիրների հետ ծանոթանալուց հետո, նա կազմելու յե մանկահաստատության անելիքների պլանը:

Տոնակատարության ժամանակ մանկահաստատությունը պիտի ե ընդհանուր գեմնաստրացիային մասնակցի, յերեկույթ կազմակերպի ե այլն և նման մոմենտները յերեխաների վրա վառ տպավորություն են թողնում, վորոնք հետաքայում կարտահայովեն նրանց խաղերի մեջ եւ:

Ինտերնացիոնալ գաստիարակության համար մեծ արժեք ունի յերեխաների մեջ հետաքրքրություն տուաշ բերել գեպի այլ յերկրներում ընթացող դաստիարակային պայքարը, գեպի ՄԱՊԲԸ, զեպի հեղափոխականների հերոսական գործունեցությունը: Դաստիարակչության համագալատախան հարուստ նյութ կը գտնի թիւթերում ու պիոններական ժողովնախերում:

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մանուկի հակալրոնական դաստիարակությունը, մանավանդ գյուղական պայմաններում շատ և շատ կարևոր եւ Հակալրոնական դաստիարակությունը դասակարգային պայքարի ներկա շրջանում կազմում ե կոմ. դաստիարակության անբաժանելի և անհրաժեշտ մասը:

Կրոնը, վարպետ աշխատավորության գիտակցությունը բթացնող փակտոր և վորպետ դասակարգային թշնամու զենք, մեծ վնաս և հասցնում և թշնամի ուժ և մանուկի կոմ. դաստիարակության համար:

Կրոնը մանուկի ուշադրությունը կենդրոնացնում ե գերբնականի վրա, վախեցնում ե աստծով, կտրում ե շրջապատող իրականությունից, նա մանուկի ակտիվությունը, նախաձեռնությունը, հետախուզորեն ճանաչելու, ստեղծագործելու ձգումը ճնշում ե:

Կոմ. դաստիարակությունը, ընդհակառակը, տալիս ե մատերիալիստական դաստիարակություն, վորը կրոնական, իդեալիստական դաստիարակության արժանական հակադրանքն ե հանդիսանում:

Շատ ընտանիքներում բավական են համարում յերեխային յեկեղեցի շուղարկել, վկից խաչ չը կախել, աստծո մասին չը խոսել նըման դաստիարակությունը անկրօնական դաստիարակություն եւ Անկրոնական դաստիարակությունը ներկա ետապում, յերբ կրոնականությունն ու յեկեղեցին դեռևս կան ու գործում են, միանգամայն սխալ ե:

Նախադպրոցական (կամ մի այլ կրթական) հաստատությունը կարժեց ե սահմանափակվել անկրոնական դաստիարակությամբ: Իհարկե վոչ: Յերեխան շատ անգամ շրջապատող անհատներից կրոնական դաստիարակություն ե ստանում. նա տատից, ընկերներից, գրացիներից լսում ե աստծո, Քրիստոսի, սրբերի, հանգերձյալ կյանքի մասին: Շատ յերեխաների սիստեմատիկ կրոնական դաստիարակություն ե տրվում, պիտի ե դրա դեմ պայքարել: Այն, իսկ պայքարել կարելի յե վոչ թի անկրօնական, այլ միայն հակարօնական դաստիարակությամբ:

Հակալրոնական դաստիարակության համար հարուստ նյութ ե տալիս շրջապատող հասարակությունը, բնությունն ու մարդկանց աշխատանքը (բույսերի պատվաստում, ծառերի սրսկրւմ, ջերմոցներ, հողի մշակման ձեւը տարբեր կուլտուրաների համար, գյուղատնտեսական մեքենանաներ, տրակտոր, այլուրաղացներ, կոլեկտիվ աշխատանք, քամի, փորոտ, անձրև, կարկուտ, նախապաշտմունքներ և այլն և այլն),

Յերեխաներին պետք ե ցույց տալ և փորձով համոզել, վոր կյանքի պայմանները՝ ինչ վոր աստվածներից, սրբերից կախում չունեն և այդ պայմանները դեպի լավն են փոփոխվում աշխատավորություն, աշխատանքի, գիտության, դասակարգային պայքարի հիման վրա:

Դաստիարակչութին ջրջապատող միջավայրը պետք ե լավ ուսուժասիրի և ոգտագործի՝ հակակրոնական աշխատանքների համար: Հակալրոնական աշխատանքը չը պիտի սահմանափակվի միայն կրոնական ծիսակատարությունների վնասակարության ինդիքները շոշափող զրույցներով:

Կերպի որերն ու կրոնական տոների որերը մանկահաստատության համար հանգստի որ չը պետք ե լինեն, պետք ե աշխատել, վորայդ որերին յերեխաները լրիվ և սովորական կերպով սանկապարտել (հրապարակ) հաճախեն:

Դաստիարակչութիները, վորոնց վասահվում ե յերեխաների կոմունիստական դաստիարակությունը, իրենք պետք ե ակտիվ անաստաձնել լինեն:

ՏՂԱՆԵՐԻ ՅԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մանռւկների կոմունիստական դաստիարակությամբ մենք պետք ե պայքարենք նաև կնոջ աղամագրման համար: Պետք ե արմատախիլ անել այն հին հայացքը, ըստ վորի կինն ընտանիքի ստրուկը պիտի լինի:

Այդ հին հայացքը դեռևս իր աղջեցությունն ունի տղաների և աղջիկների դաստիարակությունն հարցի վրա:

Մեր առաջ խնդիր ե դրված տղամարդկանց հետ միասին և նրանց հավասար, կանանց ևս ներգրավել սոց. շինարարության մեջ: Սրա համար անհրաժեշտ ե լիակատար կերպով ապահովել տղաների և աղջիկների հավասար դաստիարակությունը, սկսած նախադպրոցական հաստատությունից:

Ծնողների մի մասը դեռևս աղջիկների դաստիարակության և նրանց սոցիալական դերի մասին այլ գաղափար ունի, քան տղաների մասին: Դա արտահայտվում ե հենց տնային աշխատանքների մեջ:

Նախադպրոցական հաստատությունները սեռերի հավասար դաստիարակության շուրջը լայն բացարական աշխատանք պիտի տանեն ծնողների և հասարակության մեջ և իրենց ներքին սշխատանքն ել կազմակերպեն այնպես, վոր ներկա մատադ սերնդի աղջիկներն ու տղաներն ապագայում հավասար չափով սասնակցն սոցիալիստական հասարակակարգ կառուցելու գործին: Դեռևս վաղ հասակից պետք ե տղաների և աղջիկների մեջ և իրար հանդեպ հավասար կոլիկտիվ հարաբերություն ստեղծել, հավասար կերպով ողտագործել նրանց նախաձեռնությունն ու ստեղծագործությունը, հավասար չափով նրանց տալ հասարակագիտական գիտելիքներ և պոլիտեխնիկական պատրաստություն:

Ընտանիքում ստացած անհավասար դաստիարակությունն արտահայտվում է մանկանաստառության մեջ տղաների և աղջիկների տարբեր վերաբերմունքով՝ վարդով։ Աղատ խաղերի ժամանակ շատ անգամ աղջիկներն ու տղաները բաժան են խաղում։ Այն ժամանակ, յերբ տղաները տրակուորի, ՄՏԿ-ի, յերկաթուղու և այլ նման խաղեր են խաղում, աղջիկներն իբենց խաղերի մեջ տալիս են ընտանեկան կենցաղի պատկերը—ճաշ են յեփում, տիկնիկ են խաղում և այլն։ Աղջիկները սիրով երթավազություն կանեն ճաշարանում, կաշխատեն տնտեսական հանձնաժողովում, կարով կզբաղվեն, իսկ տղաներն, ընդհակառակը, սիրով մուրճով, սղոցով աշխատանքներ կը կատարեն։

Մանկահաստատության աշխատողները, հաշվի առնելով վերոհիշյալ մոմենտները, պիտի աշխատեն այնպես տանել դաստիարակչական աշխատանքը, վոր տարրերությունները ուս, տարվա վերջին վերանան և տղաների ու աղջիկների հավասար դաստիարակությունն ապահովվի։ Ամեն տեսակի աշխատանքների, խաղերի, առաջադրանքների մեջ աղջիկներն ու տղաները հավասար մասնակցություն պիտի ունենան։ Յեթե խաղալիքներն ու գործիքները բոլորին չեն բավարարում, այդ գեպըում երթականություն ե պահպանվում։ Կաղմակերպչական և գեկավարական աշխատանքներում ևս աղջիկներն ու տղաները հավասար դեր պիտի խաղան։

Եթ զրույցների մեջ դաստիարակունին պետք է յերեխաներին բացարի, վոր աղջիկներն ևս աշխատանքի և խաղի մեջ կարող են և պետք է կարողանան տղաներին հավասարվել։ Համապատասխան որինակներ շատ կարելի յերեկ հասակավորների աշխատանքային գործունեյությունից և հենց մանկահասպարակի կյանքից։

Յերեխաների գաստիարակության մեջ սեռերի հավասար դաստիարակության հարցում, մեծ դեր է խաղում հասակավորների որինակը։ Այս տեսակետից ահագին մեծ նշանակություն և ստանուածնություն և հասակավորների մեջ կոմ. դաստիարակության խնդիրների շուրջը բացատրական աշխատանք տանելը։

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցականի կոմ. դաստիարակության գործը լավ կազմակերպված, լավ հիմքերի վրա զրված կիմնի միայն այն ժամանակ, յերբ նա սերտ կազմական լինի առց. շինարարության կողմից մատադ սերնդին առաջանական աղջիկների հետ։

Այդ պահանջների մեջ կարևորագույն տեղ և գրավում պոլիտեխ-

նիկան դաստիարակությունը։

Ի՞նչպիսի դաստիարակչական խնդիրներ ե իր մեջ պարունակում պոլիտեխնիզմը նախադպրոցական հաստատության մեջ։ Այդ խնդիրները

հետևյալներն են՝ 1) Յերեխաների մեջ զարգացնել (դաստիարակել) հետաքրքրություն գեպի տեխնիկան։ 2) Յերեխաներին լայն հնարավորության տալ ծանոթանալու բազմատևակնյութերի հետ (ջուր, կավ, ավազ, աղյուս, քար, փայտ, թիթեղ և այլն), 3) Առաջ բերել և զարդացնել ցանկություն այնպիսի աշխատանքներին մասնակցելու, վորոնք ողտակար են կոլտնտեսության, մանկահասպարակի, մուռների համար։ 4) Տալ ապրական գործիքներ գործածելու պարզ ունակություններ։ Այդ գործիքներն են՝ մուրճ, զանակ, աքցան՝ փայտի վրա աշխատելու համար, բան, փոցի՝ բանջարանոցային ոշխատանքների համար, մկրտու, վրձին, ներկեր՝ ստեղծագործական աշխատանքների համար. ավել, լաթ, սրբիչ՝ տնտեսական աշխատանքների համար։ 5) Ապահովել մանուկների հնարագիտության, նախաձեռնության լայն հնարագործություններ տալը վերոհիշյալ բոլոր տեսակի աշխատանքների ընթացքում։ 6) Մանուկներին ողնել և զեկավարել աշխատանքի կազմակերպչական հարցերը ճիշտ լուծելու համար։ 7) Զգտել վերոհիշյալ աշխատանքների վերաբերյալ քիչ թե շատ սիստեմատիկ զիտելիքներ տալ։ Այլ խմբի կամ մանկապարեզի հետ կնքած սոցիալիստական մրցման պայմանագիրը լավ իրագործելու համար աշխատանքների լավ արդյունք ստանալ։

Մանկապարտեզի պոլիտեխնիկական՝ դաստիարակության հիմք պետք է ընդունել մանուկների աշխատանքային գործունեյությունը և նրա կազմակերպումը։ Աշխատանքի կազմակերպման և՝ գնալուրման մեջ հաշվի պետք է առնել մանուկների տարիքային առանձնահատկությունները։

Յերեխաները շատ անգամ չեն հասկանամ աշխատանքի և խաղի մեջ յեղած տարրերությունները։ Նրանք հաճախ աննպատճ կերպով կարող են յերկար ժամանակ զրազել մուրճով, ամաները լվանալու մեջ շարունակ նույն բանն անել և այլն։ Նրանք դեռ նոր են սկսում ծանոթանալ գործիքների և շինանյութերի հետ, Սկզբում նրանք ավագի, ջրի, կավի, մկրտու, վրձինի հետ պիտի միայն խաղան, իսկ հետո հետզհետե սովորեն վոչ բարդ բաներ շինել՝ հետագայում պարզեց բարդին անցնելու նպատակով։

Պետք է հիշել, վոր ավագ յերեխաների տնտեսական աշխատանքը բազմազան պետք է գարձնեն, Պետք է յերեխն նոր նյութեր մտցնել, յերեխաների հերթապահություն սահմանել խոհանոցում, ծաղիկների համար արկու, կրտսել յերեխաների համար խաղալիքներ շինել տալ և այլն։

Դաստիարակչունին զիմավորակես պետք է աշխատանքների նախադպրամատական մասը կատարի, իսկ աշխատանքի ընթացքում, զըժվարին զեկավերում զեկավարի, վոր յերեխաները աշխատանքի առանձին

մասերը հաջողությամբ կատարեն։ Դաստիարակչունին պետք է հետեւի, վոր յերեխայի մարմինը աշխատանքի ժամանակ ուղիղ դիրք ունենա, աշխատանքից հաջած յերեխաներին պետք է առանց նրանց հուզելու աշխատանքից հեռացնել։ Աշխատանքի պրոցեսում յերեխան այնքան կարող է տարվել իր զբաղմոնքով, վոր գրքիքն ու շինանյութը, ինչքան ել ինքը հոգնած լինի, չի ուզենա թողնել։ Մանուկի դեմքի կարմրելը, նրա քրտնելը հոգնածության ցայտուն ապացույցներ են։

Յեթե մանկահաստատությունը աշխատանքի սենյակ կամ անկյուն ունենա, դա շատ մեծ նշանակություն կունենա։ Կոլտնտեսության պայմաններից յելնելով, վորքան կարելի յե լավ ու բավարար պետք է կահավորել անկյունը և աշխատանքի նյութ ունենալ։ Տարրական կահավորանքը (հասարակ դարակ պահարան, փայտիկներ և այլն) կարող են հենց իրենք, յերեխաները շինել Աշխատանքի անկյունը մեծ չափով կը նպաստի յերեխաների դիտելիքների ամրապնդան, լայնացան և խորացանը։

ՄԱՆԿԱՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՍՎԸ

Հողամասը պիտի մանկահապարակի շնչքին կեց լինի, վոր յերեխաները յերթեկության վրա ուժ չը կորցնեն։ Այսուղ յերեխաներն ամբողջ տարին խաղում, աշխատում և զրա արդյունքները աեսնում են ներանք դիտում են թե ինչպես զանազան բնական յերեւյթները իրար են փոխարինում, և դանում են դրա պատճառները։ Հողամասում կարելի յե բանջարանոց, ծաղկանոց, պարտիզակ ստեղծել ու խնամել։ Յեթե հողամասը այդի յե, առա պետք ե ծառերի ինամքին հետեւել Հողամասում յերեխաները կարող են տարվա 4 յեղանակներին ել աշխատել։ Փարնանը հողն են մշակում, ցանում են, տնկում, ջրում։ Ամռանը հետեւում են բույսերի աճման, վնասակար միջատներն են հավաքում։ Աշնանը բերքն են հավաքում, չոր տերեները այրում փորում են, պարարտացնում և «աշնանացան անում»։ Զմռանը ծառերի բներն ու տունկերն են ձյունով ծածկում, ճանապարհը ձյունից մաքրում, ձյունով խաղալու տեղ պատրաստում։ Հողամասում ամեն մի նոր սկսած աշխատանք մինչեւ վերջը պիտի տարվի, իսկ այդ ապահովելու համար պետք է վոր հողամասը մեծ չը լինի—ամեն մի յերեխայի համար վոչ ավել՝ քան $\frac{3}{4}-1$ քառ. մետր։ Յերեխաները որական պիտի աշխատեն $\frac{1}{2}$ ժամից վոչ ավել իսկ կրտսերները՝ զրանից ել պակաս։

Բնության մեջ առանց գործիքների աշխատանք կատարել հնարավոր չե, յերեխաներին պետք ե տալ բահ, փոցի, դույլ, ցնցուղ և այլ անհամեցած, բայց տարրական գործիքներ։ Այդ գործիքները յերեխաների տարիքին համապատասխան պիտի լինեն—բահ՝ յերկարությամբ

20 սանտիմետր, լայնությամբ 12, իսկ կոթը՝ 75 սանտիմետր։ Փոցիքը յերկար, 95 սանտիմ., յերկաթյա մասը՝ 22։ Դույն ու ցնցուղը ջրով լիքը՝ 400—600 գրամից ծանր չը պիտի լինեն։ Փոցիքը և բահը պիտի կշռեն 800 գրամ ամեն մեկը։ Պետք է նաև 120 սանտիմ. յերկարության և 40 սանտիմ. լայնության պատգարակներ ունենալ։

Յեթե հողամասը մարգերի յե բաժանված, ապա ամեն մեկի յերկարությունը 2 մետրից և լայնությունը 40 սանտիմետրից ավել չը պիտի լինեն։ Ուղիների լոյնությունը 50—60 սանտիմետր և լինելու։

Ամեն պատահած բան հողամասում չը պետք է տնկել։ Պետք է ընտրել շուտ բանող և համոնղ բույսեր։ Որինակ, կարմիր բողկ, սոխ, գաղար, կարտոֆիլ գրում, յեգիպտացորեն, արևածաղիկ և այլն։ Փորձի համար արժե 1—2 տեսակի նոր բանջարեղեն տնկել։

Ծառերի վրա արվեստական թռչնաբներ դնել։

Հասարակ ամենափոքը հողամասումն ևս կարելի յե մարգեր և ծաղկանոց շինել։ Պետք է նաև զանազան պտղատու ծառերի սերմեր տնկել և հետեւել նրանց աճմանը։

ԵԿՍԻՈՒՐՈՒՄ, ՊՏՈՒՅՑ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՆՊԱՏՈՒԿԸ

Պոլիտեխնիկական գաստիարակության համար բավական չե տարրական գործիքներով զանազան իրեր շինել կամ հողամասում աշխատել։ Մանուկները պետք է տեսնեն մեքենայի աշխատանքը, կենդանիների խնամքը, հասակալորների դաշտավարական աշխատանքը, հասկանան աշխատանքային պրոցեսի ելությունը, ճանաչեն և ուսումնասիրեն բնությունը, վերջինիս հիման վրա կենդանի անկյուն կազմեն և այլն։

Եկակուրսիս պոլիտեխնիկական գաստիարակության յեղանակներից մեկն ե։

Եկակուրսիս աշխատանքը պատահական բնույթը չը պիտի կրեն։ Դաստիարակչունին տեղի պայմանների, յեղանակի համեմատ նախապես սլան պետք է կազմի և ըստ այնմ յերեխաներին եկակուրսիս տանիւ։

Եկակուրսիս պիտի ժամանակ դաստիարակչունին հարցիրի միջոցով, յերեխաների մատածողականության զարգացմամբ, նրանց հասկանալի յե զարձնում տեխնիկայի, աշխատանքի լավ կատարման առավելությունները։

Դեպի արտադրական ձեռնարկ եկակուրսիս կազմակերպելով, յերեխաները շատ նոր տպագորություններ են ստանում, ծանոթանում են վոչ բարդ մեքենաների աշխատանքներին, իմասում են, թե այստեղ աշխատանքը ինչպես ե կաղմակերպված։ Յերեխաները այս դեպքում ինքնուրույն կերպով այն յեղբակացության կը հանգեն, վոր մեքենայի

Վրա ավելի լավ և արագ կարելի յե աշխատել, քան ձեռքով կամ հասարակ գործիքներով:

Արտադրության (ՄՏԿ.ի արհեստանոց, ելեկտրագազ, փողոքիկ դորժարան) մասին զիտելիքները մի անգամից չը պետք է տալ, այլ մի քանի եկակուրսիայի ընթացքում միայն Էավ կը լինի, յեթե հարցածային բանվորները հասարակ կերպով կարողանան բացատրել իրենց մեքենայի կազմությունն ու աշխատանքը:

Եհափ բնություն և զյուղատնտեսական աշխատանքների վայրն եկակուրսիաներ ավելի շատ կարելի յե և շատ ել պետք և կաղմակերպել Յերեխաների հետ պետք և դնալ և տեւնել, թե հասակավորները ինչպես են աշխատում արտում, կոյցերիտ զարոցը՝ հոգածառում, անտառում, գետափին: Յերեխաներին պետք և տանել թուչնանոց, ճաղարանոց, կովելի գոմ և այլ տեղեր, վորպեսզի նրանց գլտելիքներն ավելանան: Փոքիկներին շատ հեռու տանել չի կարելի: Մեծահասակներին կարելի յե տանել կալսելու, տեղը, պտուղ չորացնելու վառարանների մոտ, արակորի աշխատանքը տեսնելու և այլն:

Եկակուրսիայից հետո պետք և զրույց ունենալ ստացած զիտելիքների, տպագործությունների մասին և ըստ հնարավորության, տեսածը նկարել տալ, ծեփել և խաղեր խաղալ (տրակտոր իր հետաքարը մեքենայով):

Բացի եկակուրսիայից, պետք և պտույտներ ունենալ դեպի մարդարանին, անտառ, ձորակ, վորտեղ առհաժեղութ և խաղեր, յերգեր կազմակերպել և, այսպիս ստած, ջթեթև ժամանակ անցկացնել:

Եկակուրսիա-պտույտների ժամանակ անհրաժեշտ և ուշադրությամբ հետևել, լսել յերեխաներին, հաշվի առնել բնության մատին նրանց ունեցած զիտելիքները, նախապաշարումները, սխալ պատկերացումները և դրա համեմատ կառուցել դաստիարակչական աշխատանքը, ինչպես բուն եկակուրսիայի ժամանակ, նույնպես և հետո: Անհրաժեշտ և աստիճանաբար փոքրիկներին կարող դարձնել յերեւյթների փոփոխելը տեսնելու և նրա պատճառները վորոշելու: Մանուկները պետք են ըմբռնեն, վոր մարզիկ միայն կոլեկտիվ աշխատանքի միջոցով են կարողանում բնության հաղթել և նրանից շատ ոգութներ ստանալ:

ԿԵՆԴՐԻ ԱՆԿՑՈՒՆ

Եկակուրսիաների ու պտույտների ժամանակ ստացած և հավաքած նյութերն այնքան շատ են լինում, վոր կարճ ժամանակում մշակել հնարագոր չի լինում: Յերեխաները սիրում են եկակուրսիայից վիրազառնալիս բերել իրենց հետ գորտ, մողես, միջատներ, բնից ընկած ձագ....: Հենդանի անկյուն կազմելով կարելի յե հետեւ սերմերի ծելուն, ձկների, թոչնի, միջատների կյանքին:

Կենդրությանը պիտի ունենա 5—6 շիշ, 3—4 գլանաձև ապակյա ամոններ, 50 սանտիմետր յերկարություն, 20 սանտիմետր լայնություն և 110 սանտիմետր բարձրություն ունեցող 2 տպակեծածկ արկղ՝ մաղեսների, կրիայի, լորթի համար, սուվարաթղթե ապակեծածկ տուփեր՝ միջատների համար, լայն գանգակ՝ թռչնի համար, մի կողմից ցանցապատ արկղ՝ կրծողների համար և այլն:

Կենդանի անկյան բովանգակությունը փոփում է տարվա յեղանակների, բնության մեջ տարվող աշխատանքի և եկակուրսիայի հետ կապված: Գարնանը կարելի յե զիտել սերմերի և արժատապատռությունների ծլելը, կարելի յե արկղում ծաղիկներ ցանել շշերի մեջ ծառի և թփի ճյուղեր դնել և հետևել նրանց սննդառությանը: Ամռանը կենդանի անկյունում կարելի յե պահել կրիա, մողեսներ, դրդոց, վոզնի և այլն: Աշնանը լավ և զիտել միջատների կյանքն ու ձմռն պատրաստություն տեսնելը: Միշտաներն աշնանը կը քնեն պատյանների մեջ կենդանի անկյունում, իսկ գարնանը գուրս կզան:

Զօռանը անկյունում լավ և թոչուն պահել և տաքոցնել ու կերպեր Յերեխանները մոտից կը տեսնեն, թե նրանք ինչ են ուսումն ինչպես են ապրում:

Բնության անկյունը դա մանկական լարորատորիա (աշխատանոց) են, այնաեղ կարելի յե փորձեր կատարել, ուշադիր զիտողություններ անել և հետաքրքրող հարցերի պատասխանը ստանալ: Կրտսեր և ավագ խմբերի համար կարելի յե մի կենդանի անկյուն կաղմակերպել: Կենդանի անկյունում հերթապահություն պիտի անեն գլխավորապես մեծասահկների բրիգադները:

ՀԵԱԽՈՒՀԱՑԱԿԱՆ ՏԱՐԲԸ ՄԱՆԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵՋ

Մանկան աշխատանքը բնության մեջ պետք և կաղմակերպել այնպես, վոր յերեխանները շարունակ զիտեն, փորձեր անեն, լույսելը ին, կենդանիներին, թոչուններին ուշադիր հետ են և իմանան, յերբ և ինչպիսի խնամք և աշխատանք պետք և կատարել:

Ամեն մի գաստիարակչունի պետք և մտածի և վորոշի, թե ինչ փորձեր կարելի յե անել բանջարանոցում, ծաղկանոցում, այգում, կենդանի բնության անկյունում: Յերեխանները վորքան շատ զիտեն, փորձեր, համեմատություններ անեն և յեղակացություններ հանեն, այնքան շւտ կազմավիճ նախապաշտամներից և հասակավորների մի մասի կրոնական աղղեցությունից: Մանուկների հետախուզությունը բնության մեջ և ընդհանրապես, հանդիսանում է մատերիալիստական և հակաբռնական դաստիարակչության հիմնական միջոցներից մեկը:

ԽԱՂԵՐ ՅԵՎ ԱԶԱՏ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐ

ԽԱՂԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մանուկների զարգացման և դաստիարակության մեջ խաղը մեծ դեր է խաղում: Նորմալ և առողջ յերեխան վոչ մի որ առանց խաղի մալ չի կարող Յերեխան, իհարկե խաղալով ուժ և կորցնում, հոգնում ե. խաղը մանուկի առաջին գործունեյությունն ե, աղատ զբաղմունքը: Մանկահաստատության աշխատանքային պլանում խաղին մեծ տեղ ու ժամանակ պիտի տրվի. նախապատրաստականի համար դժվար է շատ առաջարկություններ կատարել, իսկ խաղի մեջ նա լայն հնարավորություն ունի իր ստեղծակործական եներդիան գործադրելու Խաղալով յերեխան գտնվում է շարժման մեջ և այդպիսով նպաստում մարմինի աճման ու զարգացմանը: Խաղի մեջ զարգանում ե տեսողությունը, լուսողությունը, շշափելիքը: Յերեխանները սիրում են խմբով խաղալ իսկ դա նպաստում է լեզվի, վարժեցողության, մտածողության զարգացմանը՝ կազմակերպված կոլեկտիվ խաղը և նույնիսկ անկազմակերպ խաղը, մանուկների մեջ կոլեկտիվիզմ է զարգացնում: Յերեխանները խաղի ընթացքում բաղմատեսակ նյութերի, երերի, խաղալիքների և նրանց միխանիքների հետ գործ ունենալով, հնարավորություն են ստանում պոլիտեխնիկակես դաստիարակչիւու:

Որվա պլանում խաղերն ու աղատ զբաղմունքը մեծ տեղ պիտի գրավեն: Դաստիարակչունու այն առարկությունը, թի շաղատ զբաղմունքների ժամանակ չկա, հաղիվ ենք կարողանում կազմակերպված զբաղմունքներ անցկացնել՝ ճիշտ չեւ Որվա կարգն այնպես պետք է կառուցել, վոր որվա մեջ յերեխանները մի քանի ժամ, վոչ անընդհատ, աղատ զբաղմունքներ ունենան՝ մի խումբը խորանարդներից տուն շինի, մի ուրիշ՝ նկարներ նայի, յերբորդ՝ նկարի չորրորդը խաղու և այլն:

Խաղի մեջ արտացոլում ե նաև կենցաղն ու հասակավորների աշխատանքային կյանքը: Դաստիարակչունին դրանց միջոցով նախ հնարավորություն կունենա յերեխանների ընտանեկան դաստիարակության ուղղությունը և տարբերը ճանաշելու և յերկրորդ՝ կկարողանա համապատասխան սոցիալիստական պրոլետարական ուղղություն տալ զբանց: Իհարկե վերջինս ըսնի չը պիտի լինի, այլ բնական ընթացք պիտի ունենա: Յերբ յերեխանները զաստիարակչունիների կողմից նախապես վորոշած և ստեղծած պայմաններում (խաղալիքներ, զրուանք և այլն) գտնվեն, աղատ աղատ, բայց բովանդակալից ու հետաքրքիր խաղեր կը սարքին, վորոնք ըստ մանուկների բնական հակումների և ըստ կոմ. դաստիարակության պահանջների՝ կոլեկտիվիստական բնույթ պիտի ունենան:

Մենք ասացինք, վոր մանուկների աղատ խաղերի մեջ արտացոլում ե շրջապատող կյանքը: Դրա մեջ դեռևս շատ բացառական կողմեր կան (հարբեցողություն, ծխակատարություն, գողություն, ծեծ, հայնոյանք և այլն), վորոնք արտահայտվում են խաղերի մեջ: Ի՞նչպես պայքարել դրանց գետ: Յեթե դաստիարակչունին կտրուկ ու մի անգամից փորձի արդեկել ու վերջ ատալ դրանց՝ ողուտ չի սահացվի: Դաստիարակչունին սիստեմատիկաբար պետք է կարողանա յերեխաններին նման ազգեցություններից աղատել, իսկ դրա համար պետք է ավելի տպավորիչ, զբավիչ խաղեր ու զբաղմունքներ մացնել, վորոնք մեռնեն նախորդ վնաս ակար ազգեցությունները:

ՆՅՈՒԹԻ ԱԶԱՏ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ԽԱՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Աղատ զբաղմունքների և խաղերի մեջ մանուկները ողտագործում են վոչ միայն խաղալիքներ, այլ և բազմազան նյութեր: Յեթե դաստիարակչունին ուզում է, վոր յերեխանների աղատ զբաղմունքները լավ ընթանան, աղատ նա պետք է խումբն ապահովի անհրաժեշտ նյութերով: Մանկահարապարակը և մանկապարտեղն ամենից առաջ ապահովելու յեն շինանյութերով—ավազ, կավ, փայտե շինանյութ և գործածությունից գուրս յեկած՝ լուցկու տուփ, ներկի տուփ, պարաններ, բարակ թղթեր, խցան, ուղին և այլն: Պետք է ունենալ նաև բազմատեսակ ու տարբեր մեծության քարեր, խեցիներ, տերեններ, ճյուղեր և այլն և այլն:

Ոյս նյութերը պիտանի յեն նախադպրոցական բոլոր կարգերի համար: Մանուկները շատ են սիրում ավազի հետ խաղալ, նրանից և այլ նյութերից շենքեր, պարտեզներ շիներ: Շինարարական աշխատանք զբաղմունքների համար շատ կարելու և կավը: Կավից շատ ու շատ բան կարելի յե շինել մանավանդ, յերբ կավը խառնում են ավազի հետ և ողտագործում են տուփեր (ձեւ տալու համար), փայտիկներ և այլն:

ԽԱՂԱԼԻՔՆԵՐ

Բացի խաղերի և աղատ զբաղմունքներ հատկացված բազմատեսակ նյութերից, մանկահարապարակում և մանկապարտիզում (ոչախում) շատ խաղալիքներ պետք ե ունենալ: Կրտսեր խմբին պետք է տալ այն պիտի խաղալիքներ, վորոնք կոժանդակեն գույների, ձեերի անուններն իմանալու, ձայնն ու չափը ճանաչելու: Այսպես, որինակ՝ 20 յերեխան ունեցող խմբում լավ է ունենալ՝

1. Գունավոր բուրգեր՝ մեծ 2 հատ, փոքր՝ 2 հատ,
2. Բազմագույն աշխարակ—1 հատ,
3. Մասերի բաժանվող ջրաման—1 հատ,
4. Մասերի բաժանվող տակառ—1 հատ,

5. Մասերի բաժանվող ձու—1 հատ:
 6. Զորս դույնի խոշոր ուլունքներ
 7. Փայտյա զնդակներ—2 հատ,
 8. Կլոր մողափիկա (գույնզգույն փայտյա կտորներ կերպավորելու համար)—1 արկղ,
 9. Տափակ մողայիկա—1 արկղ
 10. Փայտյա մուրճեր 4 գույնի—12 հատ,
 11. Շարժվող պտտավող խաղալիք—10 »
 12. Զանազան դույնի ամաններ—5 »
 13. » » աղնակներ—5 »
 14. Քամազաց—1 հատ
 15. Թիակներ միծ—2 հատ
 16. Թիակներ փոքր—10 հատ
 17. Զանազան պատճեններ

Այս խաղաղիքներով կարող են խաղալ նայեա ավագ խմբի յերեսաները։ Բայց ավելի լավ կլինի, յեթե ահծերին տրվեն շարժունություն տվող խաղեր—սանձեր, թռչելու պարան, մեծ ու փոքր զնդակներ։ Մեծերը պիտի ունենան նաև յերկարից յեվ քիբեդից տինած խաղալիքներ։

- Պիոներ կոնսուլտանտարք—մազնիս, թիթեղ, յերկաթալար,
 - Շաղեկառք, բեռնակիր ավտո, ելեքտրոբարչ, ավտոբուս, առավանդակ,
 - Անիվավոր նստարան,
 - Բարձրացնող կռաններ,
 - Զբաղաց և քամազաց,
 - Խաղահրաներ՝

արջ, գալիք փիղ, արծիվ և տըլ կենդանիներ ու թռչուններ զինաներ.

Փայտյա կարմիր բանակայիններ,
Պաճուճանքալին թատրոն—Շ հատ

Այս խաղալիքները շատ են նպաստում նախադպրոցականի լուգության, տեսովության, շաշափելիքի, զգայարանների զարգացմանը և պատում են գեղի բնությունն ու տեխնիկան ուսեցած հետաքրքրության աճմանը: Խաղալիքը միայն զվարճական չի, նա ոգնում է յերեխայի զարգացմանը:

Բացի այս խաղալիքներից և ընդհանրապես նախադպրոցական հաստատությունների համար հատկապես շինած և շուկայում յեղած խաղալիքներից, մեծ նօանակություն պիտի և տալ յիշեխանելով ինքնառեն խաղալիքներին։ Ամեն մի դաստիարակչուհի ինքը պիտի կարողանա խաղալիքներ շինել և մանկապարտեղի ավագ յերեխաներին սովորեց-

Ներ: Յերեխանիքը շատ անզամ ուզում էն իրենց տեսած անզի, ջրագացի, ճռանակի սմանությամբ խաղալիքներ շինել բայց տերինիկական գիտելիքներ չունինալու պատճառով, չնա կարողանում շիներ Դեկավառուհին պետք է ոգնի յերեխաներին այս կամ այն նպատակահարմար խաղալիքը շինելու Դեկավառուհին պետք է հնտեի, թե հրապարակի վրա հայերին կամ ուռսիրեն ինչ նոր գրականություն կանախադարուցականի ինքնաշխեն խաղալիքների մասին, և այդ գրականությունն ոկտագործի իր աշխատանքների ընթացքում:

Մանկապարտեզում հնարավոր եւ պետք եւ շատ ինքնագործ խաղալիքներ շինել ահա դրանցից մի քանիսի ցուցակը.

1. Վոռան.
 2. Ջրալաց, քամմաղաց.
 3. Թղթե թոչող ոձ.
 4. Քամու աճիվ.
 5. Թոչող թոչուններ.
 6. Փոքրիկ սավառնակներ.
 7. Պարաշյուտ.
 9. Պրոպելլեր.
 9. Ջրալացի անիվ.
 10. Ծառի կեղևից նավակ.
 11. Սեմաֆոր.
 12. Կշեռք.
 13. Ճոճանակ.
 14. Շարժվող ձուկ.
 15. Գայլեր.
 16. Թղթե նավակ.
 17. Շատրվան.
 18. Անիվավոր սայլեր.
 19. Շոգեկառք.
 20. Թիթեղուա անիվ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԽԱԴԵ

Բացի ազատ խաղերից, մասնկանը ապահովում պետք է կանոններ ունեցող կազմակերպված խաղեր լինեն: Յեթև ազատ խաղերի մեջ յերեխաններն իրենք են կազմակերպվում, խաղին բովանդակություն ու կանոններ տալիս, ապա կազմակերպված խաղերն արդեն ունեն իրենց կանոնները, վորով պիտի առաջնորդվի խաղացողների վողջ կողեկանիվը: Կազմակերպված խաղերը գարգացնում են ձարպկություն, սրա-մտություն, շարժումների արագություն և կորեկտիվիտ:

Նրանք առանձնաւատուկ նշանակություն ունեն մանուկի Փիզի-կական դարձացման համար:

Կազմակերպված խաղերի բովանդակությունը պետք է յերեխայի շրջապատող կյանքից վերցրած լինի: Այդ խաղերի մեջ յերեխաներ, պիտի լիներ, կոլտնտեսականներ, կարմիր բանակայիններ, բանվորներ պիտի լինեն: Բնության և կենդանիների կյանքից ևս վորոշ տարրեր՝ վորոտ, անձն, ձիռ արշավ և այլն պիտի տեղ ունենան այդ խաղերի մեջ: Վորքան շատ վառ պատկերներ լինեն, այնքան յերեխաները գրանով ավելի կը հափշտակվեն և ավելի կը կազմակերպվեն: Մընչ հեղափոխական նախադպրոցական մանկավարժությունը մեղ շատ խաղեր և թողեր, վորոնց բովանդակությունն ու դաստիարակչական նպատակադրումը գասակարգային-բուրժուական են: Այդ խաղերի մեջ առանա, հրեշտակ, յեկեղեցի, թագավոր, հայ, թուրք (իրար թշնամի) և այլ գենքեր շատ կան: Այդ խաղերն իրենց բովանդակությամբ անպետք ու վնասակար են, բայց յերեխանիների ֆիդիկական դարձացման վրա մեծ աղղեցություն ունեն: Ի՞նչ անել այդ խաղերը: Պետք է կարողանալ այդ խաղերի բովանդակությունը փոխել չը փոխելով նրա վազքի, վոստյունների, իմացականության տարրերը: Պետք է հնարել նոր խաղեր ևս, բայց աշխատել վոր շինծություն չը լինի դրանց մեջ: Չեռքի տակ պետք է ունենալ նախադպրոցականների շարժական խաղերի նոր դրեհը:

Շարժական խաղեր առանձնապես շատ պիտի լինեն մեծերի խմբում:

Կազմակերպված խաղերի ժամանակ դեկտվարունու ներկայությունն ու մասնակցությունը պարտադիր և նա նախ և առաջ յերեխաներին բացատրելու յե խաղի կանոնները: Յեթե մի քանի յերեխաները չը ցանկանան խաղին մասնակցելու, ապա չը պետք է սափել, Նրանք դիտողի դերում լինելով, հետո կմիանան ընդհանուր խաղին, յերբ արդեն խաղի գրավչությունն նրանց ակնհայտ դառնա:

Նոր կազմակերպված խաղերից վերցնենք, որինակի համար, «արքակտորները յեկան» խաղը: Յերեխաները շրջան են կազմում և ձեռները զրած ազգբնակին կանգնում են: Մեկը, հաշվով կամ նշանակովի շրջանից զուրս և գալիս: Նա պետք է քայլի և ասի: «Կոլտնտեսության գյուղում քայլում եմ, պատուհաններին եմ նայում: Ով՛ ինձ հետ կոտրակտորներ տեսնելու»: Խոսքը վերջացնելով, նա կանգ է առնում և մոտի յերեխայի ուսին խփում: Վերջինս հարցնում է՝ «ով ես». առաջինը պատասխանում է. «Կոլտնտեսական»: 2-րդը՝ «Ի՞նչ ես ուզում»: 1-ինը՝ «յեկ շուտ վաղենք, տրակտոր տեսնենք»: 2-րդը խակույն շրջանակից զուրս և գալիս և յերբ շրջան կազմած յերեխաները խմբով առում են»:

«Վազիր տակտոր ենսելու, մեկ, յերկու».

Յերկու խաղացողները շրջանագծով իրար հակառակ վազում են, առեն մեկն աշխատում և ազատ տեղը հասնել. ով շուտ հասավ, նա յել

հաղթած և լինում: Առ այսպիս շրջանից զուրս և մեռմ և խաղը շարունակվում է:

Այս խաղի մեջ ի՞նչ ընդհանուր կանոններ կան, վորոնց բոլորը պիտի յենթարկվեն:

1. Իր տեղը իմանալ և սրանով շրջանը լավ պահել.

2. Երջանից դուրս չգալ՝ մինչև ուսին չը դիպչեն.

3. Վազիր պատրաստվել բայց տեղումը կանգնել մինչև 1 ին խաղացողների խումբը չասի «մեկ, յերկու»:

4. Յեթե մեկը ժամանակից շուտ և վազում և խաղը տարված:

Այս կանոնների նպատակն են այսի յերեխաներին համբերության և տոկունության վարժեցնել և հետո, տալ վազրի վարժողություն:

Կան խաղեր, վորոնք յերեխաներին ստիպում են տեղը կորցնել և շուտ գտնել զարգացնում են տեսողական հիշողությունը, լսողությունը և այլն:

Նման խաղեր կազմակերպելով դաստիարակչունին պետք է հիշի, վոր նման խաղերի մեջ յերեխաները շատ եներգիա յեն կորցնում ու հետիի, վոր նրանք շատ չը ծանրաբեռնվեն: Այսպես, որեկան պետք է յերկու տարրեր կազմակերպված խաղեր ունենալ մեկը՝ հանգիստ խաղ, իսկ մյուսը՝ միը, վոր ըոլոր յերեխաներն ել վազելու հնարավորություն ունենան: Այդ յերկու խաղերի տեղությունն ավագ խմբում 20-30 րոպե, իսկ կրտսեր խմբում՝ 15-20 րոպե պիտի տեսն: Կեկավարունին խաղերին պետք է մաւանակցի վոչ սիայն լսու պաշտոնի, այլ ինքն ես խաղով տարրի յերեխաների հետ միտսին, վորպեսզի խաղը միը և վողեռորդ ընթանա: Ժարշում պարունակող խաղերը պետք է լինի խախաղ նստած զբաղմունքից և ցերեկվա քնից հետո:

Կազմակերպված խաղերի մեջ մտնում են նայել յեցածական ու իրմիկական զբաղմունք—խաղերի մեջ զեղարվեստական-ֆիզիկական զարգացման տարրերը սերտորեն կապված են իրար: Յերեխաներն ամրողապես ոիթմի և յերաժշտական հույյուրի աղղեցության տակ լինելով չեն նկատում, թե ժամանակն ինչպես արագ անցնում ե: Նման զբաղմունք խաղեր տասնորյակում պետք է ունենալ վոչ ավել քան 3-4 անգամ:

Համեմատաբար մեծ տեղ չը պիտի ունենան սեղանի մոտ նաև ածած խաղերը: Այդ խաղերն են լոտոն, խորանարդներից կենդանիների, թըռչունների, աշխ. պրոցեսի պատկերներ կազմելը և այլն: Բայց վորով հետ նման խաղերը նպաստում են մասն մկանների, տեսողության զարգացմանը, գրելու, կարդալու և հաշվի նախապատրաստական վարժություններին, կենտրոնանալու յեն վարժեցնում, ապա նպաստավոր են պետք և գործադրիվն նախադպրոցական հաստիատություններում:

կաղմակերպված խաղերի բովանդակությունը պետք է յերեխայի ըշապատող կյանքից զերցրած լինի: Այդ խաղերի մեջ յերեխաներ, պիոներներ, կոլտնտեսականներ, կարմիր բանակայիններ, բանվորներ պիտի լինեն: Բնության և կենդանիների կյանքից ևս վորոշ տարրեր՝ վորոտ, անձեռ, ձիու արշավ և այն պիտի տեղ ունենան այդ խաղերի մեջ: Վորքան շատ վառ պատկերներ լինեն, այնքան յերեխաները գրանով ավելի կը հափշտակվեն և ավելի կը կաղմակերպվեն: Մինչ հեղափոխական նախադպրոցական մանկավարժությունը մեղ շատ խաղեր և թողել, վորոնց բովանդակությունն ու զաստիարակչական նպատակադրումը դասակարգային-բուրժուական են: Այդ խաղերի մեջ առանա, հրեշտակ, յեկեղեցի, թագավոր, հայ, թուրք (իրար թշնամի) և այլ դեմքեր շատ կան: Այդ խաղերն իրենց բովանդակությամբ անպետք ու վնասակար են, բայց յերեխաների Փիղիկական դարձացման վը ամեծ աղքեցություն ունեն: Ի՞նչ անել այդ խաղերը: Պետք է կարողանալ այդ խաղերի բովանդակությունը փոխել չը փոխելով նրա վազքի, վոստյունների, իմացականության տարրերը: Պետք է հնարել նոր խաղեր ևս, բայց աշխատել, վոր շինձություն չը լինի գրանց մեջ: Չեռքի տակ պետք ե ունենալ նախադպրոցականների շարժական խաղերի նոր գլքեր:

Եարժական խաղեր առանձնապես շատ պիտի լինեն մեծերի խսրում:

Կաղմակերպված խաղերի ժամանակ ղեկավարուհու ներկայությունն ու մասնակցությունը պարտադիր եւ նա նախ և առաջ յերեխաներին բացատրելու յե խաղի կանոնները: Յեթե մի քանի յերեխաներ չը ցանկանան խաղին մասնակցելու, ապա չը պետք է ստիպել, նրանք զիտողի դերում լինելով, հետո կմիանան ընդհանուր խաղին, յերբ արդեն խաղի գրավչությունն նրանց ակնհայտ դառնա:

Նոր կաղմակերպված խաղերից վերջնենք, որինակի համար, «արքակտորները յեկան» խաղը: Յերեխաները շրջան են կազմում և ձեռները զրած ազդեցիրն կանգնում են: Մեկը, հաշվով կամ նշանակովի շրջանից զուրս ե գալիս: Նա պեաց և քայլի և ասի: Կոլտնտեսության գյուղում քայլում եմ, պատուհաններին եմ նայում: Ով՛ ինձ հետ կգա տրմակտորներ տեսնելու:» Խոսքը վերջացնելով, նա կանգ և առնում և մոտի յերեխայի ուսին խփում: Վերջինս հարցնում ե՝ «ո՞վ ես», առաջինը պատասխանում ե՝ «կոլտնտեսական»: 2-րդը՝ «Ի՞նչ ես ուզում: 1-ինը՝ «յեկ շուտ վաղենք, տրակտոր տեսնենք»: 2-րդը խսկույն շրջանակից զուրս ե դալիս և յերբ շրջան կաղմած յերեխաները խմբով առում են»:

«Ա,ազիր տրակտոր տեսնելու, մեկ, յերկու».

Յերկու խաղացողները շրջանադժով իրար հակառակ վազում են, ամեն մեկն աշխատում ե ազատ տեղը հասնել, ով շուտ հասավ, նա յել

հաղթած ե լինում: Ուշ մնացողը շրջանից զուրս ե մնում և խաղը շարունակվում է:

Այս խաղի մեջ ի՞նչ ընդհանուր կանոններ կան, վորոնց բոլորը պիտի յենթարկվեն:

1. Իր տեղը իմանալ և սրանով շրջանը լավ պահել.

2. Երջանից դուրս չգալ՝ մինչև ուսին չը դիպչեն.

3. Կաղմի պատրաստվել բայց տեղումը կանգնել մինչև 1 ին խաղացողների խումբը չասի «մեկ, յերկու»:

4. Յեթե մեկը ժամանակից շուտ ե վազում և խաղը տարված:

Այս կանոնների նպատակն ե նախ յերեխաներին համբերության և տոկունության վարժեցնել և հետո, տալ վազրի վարժողություն:

Կան խաղեր, վորոնք յերեխաներին ստիպում են տեղը կորցնել և շուտ գտնել զարգացնում են տեսողական հիշողությունը, լսողությունը և այլն:

Նման խաղեր կաղմակերպելով դաստիարակչուհին պետք է հիշի, վոր նման խաղերի մեջ յերեխաները շատ եներգիա յեն կորցնում ու հետեւ, վոր նրանք շատ չը ծանրաբեռնվեն: Այսպես, որեկան պետք է յերկու տարբեր կաղմակերպված խաղեր ունենալ մեկը՝ հանգիստ խաղ, իսկ մյուսը՝ միը, վոր բոլոր յերեխաներն ել վազելու հնարավորություն ունենան: Այդ յերկու խաղերի անողությունն ավագ խմբում 20-30 րոպե, իսկ կրտսեր խմբում՝ 15-20 րոպե պիտի անեն: Հեկավարուհին խաղերին պետք է մասնակցի վոչ միայն ըստ պաշտոնի, այլ ինքն ևս խաղով տարվի յերեխաների հետ միտուհին, վորպեսզի խաղը միը և վողերով վաճանաւ մարզում պարունակող խաղերը պետք ե լինի խախաղ նստած զբաղմունքից և ցերեկվա քնից հետո:

Կազմակերպված խաղերի մեջ մտնում են նայել յեցաւական որիմիկական զբաղմունքները: Այս զբաղմունք՝ խաղերի մեջ գեղարվեստական-ֆիզիկական զարգացման տարրերը սերտորեն կապված են իրար: Յերեխաներն ամբողջապես որիթմի և յերածշտական հույզերի աղդեցության տակ լինելով չեն նկատում, թե ժամանակն ինչպես արագ անցնում ե: Նման զբաղմունք խաղեր տասնորյակում պետք ե ունենալ վոչ ավել քան 3-4 անգամ:

Համեմատաբար մեծ տեղ չը պիտի ունենան սեղանի մոտ նստած խաղերը: Այդ խաղերն են լուսոն, խորանարդներից կենդանիների, թըռչունների, աշխ. պրոցեսի պատկերներ կաղմելը և այլն: Բայց վորով հետ նման խաղերը նպաստում են մանր մկանների, տեսողության զարգացմանը, զրելու, կարդալու և հաշվի նախապատրաստական վարժություններին, կենտրոնանալու յեն վարժեցնում, ապա նպաստավոր են պետք և գործադրվեն, նախադպրոցական հոստատություններում:

- Այդ խողերից հիշատակենք՝
- Գունավոր լոտո—կրտսերների համար;
 - Բաղմագույն ամաններ—կրտսերների համար;
 - Գունավոր գոմինո—կրտսերների համար;
 - «Ով և բրիգագիրը» միջակ և ավագ յերեխանների համար;
 - «Ժամը քանի՞սն ե» բլեխերի—ավագների համար;
 - «Խաղում և աշխատում ենք»—կրտսերների համար;
 - Տարփա 4 յեղանակներ—կրտսերների և ավագների համար;
 - «Անտառում» (խորանարդներ)՝ կրտսերների և ավագ. համար;
 - Զոռպարկ (խորանարդներ)՝ կրտսերների և ավագների համար;
 - Թոչնանոց (խորանարդներ)՝ կրտսերների, և ավագների համար;
 - Սաղցահատ երասին—թղթի թատրոն, —կրտսերների և ավագների համար;
 - Խախերացիոնալ քրեյքերդի—ավագների համար;
 - Լենին և Հոկտեմբեր—կրտսերների և ավագների համար:

ԽՈՍՔ, ԶՐՈՒՅՑ. ՊԱՏՄՎԱԾՔ, ԳՐՔՈՒՅՑԿ

ԿԵՆԴՐԱՆԻ ԽՈՍՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑՍԿԱՆ ԴԱՍՏԻԱ-
ՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախադպրոցական հաստատության մեջ մանուկները սովորում
են կողեկտիվ ապրել և աշխատել

Նրանք պետք են հասկանան իրար, մեկ-մեկու պատմեն յերենց
աշխատանքի, խաղի, հույզերի մասին: Յերեխանները պատրաստվելու
յին սոց. շինարարության մեջ և նրա համար գործելու. նրանք պետք
են համագործակցեն, սխալները հասկանան և ուղղեն, կարողանան այլ
յերկրների բանվորներին համոզել սոցիալիզմի համար պայքարելու:
Նրանք պիտի կարողանան գործն ու խոսքը կապակցել, պրոպագան-
դա անել: Փողովներում խոսել և այլն: Այս բոլորի համար անհրա-
ժեշտ և յերեխային լավ խոսել սովորեցնել

Խ Ո Ս Ք:

Մանուկներն ավելի շատ շիռում, խոսակցություն ունենում
են իրար հետ, գաստիարակչունիների և ծնողների հետ: Խոսե-
լիս մանուկը շատ սխալներ և անում, զեկավարուհին պետք են ուշազիք
հետեւի յերեխանների խոսակցությանը, ըստ նախավորության մասնակ-
տի, վոր յերեխաններն ուղիղ խոսք լսեն, զգան, վոր գաստիարակչու-
ին հետաքրքրում են նրանց մարերով, հույզերով ու բացատրությունը
և ատալիս: Յերեխաններն ուշադիր լսում են մեծերի խոսակցությունը
և ընդորինակում են: Դեկավարուհին պետք են ուղիղ խոսել սովորեցնել

չը խեկաթյուրի, խոսի պարզ, կարճ և հանգիստ: Կտրուկ բացական-
չությունները, կոպիտ նկատողությունները կամ շատախոսությունը
կարող ե գործին փասել: Մեր յերեխանության մեջ շատ բարբառներ
կան. պետք ե աշխատել յերեխային մոտեցնել պարզ գրական լեզվին.
հնչունականությունը, խոսքերն աստիճանաբար ուղղել:

Զ Ր Ո Ւ Յ Ց

Խոսակցությունը այս կամ այն առթիվ և ամեն ժամանակ
կարող ե ծագել, Բայց յերեխներ զեկավարուհին պետք ե այնպես
անի, վոր բոլոր յերեխաններն ել միենույն նյութի մասին խոսեն, քն-
նեն իրենց աշխատանքի այս կամ այն հարցը, նշեն յերը և ինչպես
եկուրսիա զնան, ինչպես կազմակերպեն և անցկացնեն տոները և
այլն: Սա արդեն հասարակ խոսակցություն չե, այլ կուեկտիվ զրույց:
Որինակ, զեկավարուհին ուզում է յերեխաններին հետաքրքրեցնել «Մա-
յիսի 1 իշկագմամեկերպմամբ»: 3—5 տարեկաններին գժվար և լոկ զրույցով
բացատրել այս տօնի նշանակությունը. կա յերեխաններին տանում և
տափակ խումբ կամ կոլտնտեսության ակումբը և նրանց կոնկրետ աշ-
խատանքերի հիման վրա բացատրում և Մայիսի 1-ի տօնը: Ֆաբրիկ-
ների հետ տարվող զրույցն անմիջապես պետք ե կապվի գործողու-
թյան հետ: Վորքան յերեխանները մեծ են, այնքան ավելի կարելի յի-
շրույցի այս ձեից հեռանալ և զրույցը զուգանցել յերեխանների հիշո-
ղության, արտահայտելու և նկարներ, մողելներ ցույց տալու հետ:
Զրույցը զարգացնում է յերեխայի լեզուն, նրան նոր մտքեր, հասկա-
ցողություններ և տալիս: Զրույցները պարզ բովանդակություն պիտի
ունենան, յերեխաններին մատչելի լինեն և բցիսն ըրջապատող կյան-
քից:

Զրույցը պետք են հանգիստ, անաղմուկ, յերեխանների ուշագրու-
թյունը չցրող պարագաներում կատարվի: Դեկավարուհին պետք ե
նախապես վարողի զրույցի բովանդակությունը և զրույցին հարակցող
նկարները, խաղաղիքները, մողելներն ու պլակատները պատրաստած
լինի: Զրույցի անողությունը կրտսեր խմբում 3—5, իսկ ավագ խմբում
10—15 բոպեյից ավելի լինելու չե:

Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Ք

Յերեխանները շատ են սիրում պատմություններ լսել: Դաս-
տիարակչունին ինքը պիտի կարողանա լավ պատմել և յերեխաններին
ևս լավ պատմել սովորեցնել: Պատմությունների նյութը պետք ե
վերցնել պիտունների կարմիր բանակայինների, հարվածայինների,
ինչպես նաև ընության ու կինդանական աշխարհի կյանքից: Հեղափո-
խակոն անցյալից պատմություններ պատմելիս, պետք ե աշխատել

քիչ փաստեր տալ բայց այնպիսի փաստեր, վարոնք բնորոշ լինեն պատմվածքի բովանդակության և դաստիրակչական նպատակներին:

Պատմության վառ գեները յերկար ժամանակ իրենց թարմությունը չեն կողնում յերեխայի մոտ: Անթույլատրելի յե վախեցնող, սարսափ ազդող կամ դաժանություն նկարագրող պատմություններ և գանտաստիկ սիալ ըմբռնողություն տվող հեջաթներ պատմել: Յերեխայի ներվային սիստեմը շատ ազդվող ե և սրա համար սարսափ ազդող պատմությունները նրան վնաս են հասցնում: Պատմությունների նյութերը մեծ մասամբ պետք ե վերցնել մանկական լավորակ զըրքույիներից, վորոնց հետ զեկավարուհին նախապես ծանոթանալու յի: Պատմելը պետք ե կատարվի հանգիստ, անգորը պայմաններում, պատմողը պետք ե յերեխաներին տվյալ պատմությամբ հետաքրքրեցնելու համար յերեխաներին կիսաշրջան նստեցնի, պատմության ընթացքի հետ կազմաձ նկարներ ցույց տա, պատմելու շեշտականությունը պահպանի, յերդ մացնի պատմության մեջ: Յերեխաներին պետք ե վարժեցնել անձամբ պատմելու իրենց կյանքից կամ նախապես լսած պատմություններ, դրանք նպաստում են յերեխային իր մտքերը հայտնարերիու, իսկ մյուսներին վարժեցնում ե ընկերոջը լսել:

ԴՐՔՈՒՅԿՆԵՐ ԿԱՐԴԱԼ

Հատկապես յերեխաների համար շատ զրքեր կան: Շատերը տալիս են կենդանիների, թուչունների, բույսերի նկարագրություն, շատերն ել բանվորների, կոլտնտեսականների, պիոններների կյանքից ու աշխատանքի նկարագրություններ են, կան զրքեր-նկարներ առանց խոսքի: Յեղած զրքերի մեջ շատ անպետքներ կան՝ թե տեկստի և թե նկարչական ձևակերպման տեսակետից: Պետք ե գնել այն զրքերը, վորոնք առույգություն, ժրություն են տալիս մանուկին, կյանքի մասին ուղիղ ուսակերպում են տալիս և նպաստում են կոմունիտական և գեղարվեստական դաստիարակությանը:

Գրքույկներով չը պետք ե յերեխաներին ծանրաբեռնել փոքրիկներին պետք ե տալ ամենը 1-2 գիրք իսկ մեծերին 3-5 գիրք: Միանույն գիրքը կարող ե մի քանի անգամ՝ կարգացվել վորապեսի կը կողությամբ տպավորությունն ուժեղանա:

Մեծահասակներին պետք ե տալ այնպիսի զրքույկ նկարներ, վոր նրանք առանց կողմանակի ողնության կարողանան դիտել և պատմել: Վորպեսզի յերեխաները սովորեն գիրքը խնամքով պահել լավ ե ունենալ զրքերի փոքրիկ դաշտակ, նշանակել հերթապահներ, գրքերի հաշիվը (գոչ մեծաքանակ) հայտնել նրանց և անբնական որինակով սովորեցնել զրքերի հետ վարդել իմանալ:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ .

Գեղարվեստական դաստիարակությունը կոմունիտական դաստիարակության տարրերից մեկն ե: Վորպես այդպիսին, նա նախադպրոցական տարրիքի յերախաների ուղիղ ու բազմակազմանի դաստիարակության մեջ մեծ դեր է խաղում: Յերեխան վառ կերպով և զայգունքով վերապրում ե այն բոլորը, ինչի հետ շփում ե կյանքում, զրքի, նկարի մեջ, պատմվածքի ժամանակ: Նրանց վողջ գործունեությունը տրամաբությամբ և վորոշվում: Դեկավարը յեթե կարողանում ե յերեխաների տրամադրությանը, ցանկությանը անհրաժեշտ ուղղություն տալ, նպաստած ե լինում յերեխայի ակտիվ ստեղծագործական տարրերի զարգացմանը: Յեթե զեկավարուհին կարողանում ե զրամադրության ակտիվության բարձրացմանը մեջ հարվածային կոմունիտա գաւնալու ձգտում առաջ ըերել ու զարգացնել այն գեղարվեստական դաստիարակության միջոցով, նա սանկավարժական աշխատանքի զլիավոր նպատակներից հիմնականը կատարած կը լինի:

Մանկան միջավայրի առողջ, մաքուր, կայտառ լինելը, կանկարասիրի համապատասխանությունն ու զուրեկանությունը, խաղալիքների շրնծու և անշնորը չլինելը, մեծահասակների լավ վերաբերմունքը և այլ նման տարրեր՝ գեղարվեստական դաստիարակության նախապայմաններն են հանդիսանում:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸՆ

Կերպարվեստը (նկարչություն, ներկել, կտրել, ծեփել) յերեխայի կյանքում մեծ տեղ պիտի ունենա, վորովհետև մանուկը գեռ վաղ հասակից ձգտում ե իր տպավորություններն ու ապրումները նկարի կամայլ ձեռով արձանագրել ինարկե, նկարել ու ծեփել հեշտ չե յերեխաները միանգամից զրան չեն վարժվում: Նրանք կերպարվում են այն, ինչ մտածում են և կարողանում են իրենց անվարժ ձեռներով կատարել: Վորպեսզի յերեխաները սիրեն նկարել կամ կերպարվում զանազան ձեռով զրադիկել, պետք ե ձեռքի տակ ունենալ 1. բազմատեսակ սպիտակ և գունավոր թուղթ, 2. գունավոր մատիտներ, 3. ներկեր, 4. սոսինձ, 5. ցորենի կամ կարտոֆիլի ալյուր, 6. սոսնձի վրձիններ, 7. ներկի վրձիններ, 8. փոքրիկ և բութ ծայրերով մկրատներ, 9. հասարակ մատիտներ, 10. զանազանագույն կավեր, 11. զանազան չափի ու տեսակի տուփեր, 12. գրչահատ և այլն:

Դաստիարակչություն այս բոլորն ունենալով, հնարավորություն կունենա զարգացնել յերեխաների ստեղծագործությունը գեղարվեստի մեջ: Քանի յերեխաները մածանում են, այնքան ել բարդանում են

Նկարները: Արժե, յեթե հնաբավորություն՝ կա, մանկահրապարակում
այդ նկարները պահել և ստուգել՝ թե մի տարվա մեջ տվյալ յերեխան
ինչքան է զարգացել: Յերեխաները սիրում են կավից տներ, կենդա-
նիներ, շողենավ, շոգեկառք և այլ ծավալ ունեցող ձևեր (փորմեր)
շինել: Կաղապարելու, ծեփելու համար պետք ե ունենալ մաքուր, վոչ
ավագախառն կավ, փայտիկներ, փոքրիկ տախտակներ, ներկեր, կավը
մինչ այն աստիճան պետք ե սորեւ վոր դատարի ձեռքին կպչել.
շինած առարկա չորանալուց հետո պետք ե ներկել:

Յերեխաները սիրում են նաև հին ժուրնալներից, թերթերից,
նկարներ կտրել, հանել նրանց գուր և գալիս կտրելու պրոցեսը և
նկարներ ու զանազան ձեր թղթեր ստանալու: Թղթից կտրել յերե-
խաները կտրող են անել նաև ազատ զբաղմունքների ժամերին:

ՅԵՐԴ ՅԵՎ ՅԵՐԱԺԾՏՈՒԹՅՈՒՆ

Դեղարվեստական դաստիարակության մեջ առանձնահատուկ տեղ
են զբագում յերգն ու յերաժշտությունը: Յերգը բովանդակությամբ
հասկանալի պիտի լինի բնության աշխատանքի, տոների, խաղալիք:
Ների մասին: Յերեխան սիշտ ձեւը ե վորոնում իր զգացմունք-
հույցերն արտահայտելու համար, Յերգը դրան նպաստում ե: Յերե-
խան տեսել ե, ինչպես կարմիր բանակայինները քայլում են, լսել ե
նրանց յերգերը և ինքն ել ցանկանում ե քայլելիս տակտով յեր-
գեր: Տարրական տակոր՝ «մեկ յերկու, ձախ» յերեխաները կանուխ
են յուրացնում: Յերեխաները լսում են մեծերի յերգը և աշխատում
են կրկնել: Յերգը պետք ե համարյա սիշտ դուդանցի մանուկի աշ-
խատանքին ու խաղերին, վոր նրան առույթություն, ժրություն, վո-
գեփորություն տա:

Անհրաժեշտ ե ուղիղ յերգել սովորեցնել՝ չկանչել, չաղավաղել:
Յեթե դաստիարակչունին լավ լսողություն ու ձայն չունի, ափելի լավ ե
մանկահրապարակին կցված պիոները կամ կոմյերիտականը զեկավարեն:

Յերեխաների վրա ուժեղ աղղեցություն ունի յերաժշտությունը,
նվազը և պետք ե, վոր նրանք յերգեմն նվագ լսեն (դաշնամուր, ջու-
թակ, սազ, թառ, կիթառ և այլն): Նվագը բարդ լինելու չե, այլ ընդ-
հակառակը, մանուկներին հասկանալի և դյուրըմբունելի պիտի լինի:

Յերաժշտության տակ կարելի յե սիթմիկական շարժումներ ա-
նել, ծափ տալ, քայլել, պարել, ընդորինակման շարժումներ անել: Քայլ-
քը մեկ մեկ կամ զույգ զույգ կատարել և դաստիարակչունու կամ մի
խումբ յերեխաների յերգի զուդակցությանը անել: Վորպեսզի յերեխա-
ները քայլեի ընթացքում կարողանան վերադասավորել, պետք ե
դաստիարակչունին ձայնի ազդանշան դորձազրի: Որինակ, նա յերե-
խաներին առում ե՝ «յերը յես ծափ տամ, բոլորդ ել վակեց», կամ՝ «յերը

առւլիչի ձայն լսեք, շրջան կազմեք» և այլն: Ազդանշանները բազմաւեսակ
կարող են լինել: Յերաժշտական շարժվողական զբաղմունքները կազմա-
կերպված բնույթ ունենան և տեղեն վոչ ավելի՝ քան 10—20 ըուպե:

ՏՈՆԵՐ

Տոների ժամանակ գեղարվեստական դաստիարակության բո-
լոր տեսակներն ել (յերգ, նվագ, ձեկանիկերպված, տղատ խաղ, փոքրիկ
ներկայացում, պատկեր) միանում են: Տոները հատկապես ուրախ և
բարձր տրամադրություն են ստեղծում: Մանկահրապարակներում և
մանկապարտեղներում պետք ե կազմակերպել և անցկացնել սոցիալ-
հեղափոխական, կենցաղային և բնության տոները:

Տոների նախապատրաստական աշխատանքները շուտ պետք ե
ուկան: Աստիճանաբար պետք ե սենյակի պատերը զարգարելու նյու-
թեր պտտրաստել պլակատներ շինել, յերգեր սովորել և այլն:

Ամեն մի տոն իր ձեսկերպման առանձնահատկություններն ունի
և դաստիարակչունիներն այդ առանձնահատկությունների համաձայն
յերեխաների հետ նախապատրաստական աշխատանքներ պիտի կա-
տարեն և ապահովեն տոնի ուրախ, ժիրեւ բովանդակալից անցկացումը:

